


ԱՆՍՏՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՒՆՈՋԻ
ՅԵՎ ՆՐԱ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ



ИНЖЕНЕРСКАЯ
ИНСТРУКЦИЯ
ПО ТИПУ 100
Академия Наук
СССР

338.14
P-87

17 FEB 2010

CA 32/1

338.14
P-87

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ս. Անդրեյեվ.—Սոցիալիստական շինարարության նոր եսապը 6 4.
2. Կուլերիյև.—Կուլակը կոլտոզի թշնամի 5 »
3. Դյուդառնաստական կոմունայի կանոնադրություն 2 »
4. Մալիճ.—Գաղափարական ընկեր կոլտոզիկներին 5 »
5. Մ. Գիգոյան.—Կոլտոզների մասին 6 »
6. Վ. Իվանով.—Նոր եսապում 5 »
7. Դյուդառնաստական արտելի կանոնադրություն 2 »
8. Կնոշ աշխատանքը կոլտոզում 8 »
9. Ա. Անդրեյեվ.—Հյուս. Կովկ. գյուղատնտեսության սոցիալիստիկացման խնդիրները 2 »
10. Կալեյն.—Ինչպես կազմակերպել և վարել կաթնատնտեսությունը կոլտոզներում 8 »
11. Ս. Անդր.—Սոցիալիստական շինարարության դոտում 8 »
12. Հյուս. Կովկ. Յերկը, ծխախոտագործական միություն ղեկավար 2 »
13. Հի(ը)ի Կենտկոմի աշխատանքը (ընկ. Վորոշիլովի ղեկավարումը) 15 »
14. Ա. Հովհաննիսյան, յերզ մարտական փորձի (բանաստեղծություններ) 20 »
15. Հյուս. Կով. յերկրային 6 կուսակոնֆերենցիայի բանաձևերը 8 »
16. Զարգացրեք կենդանաբուծությունը կոլտոզներում 15 »
17. Յեզիպտացորենի կուլտուրան Հ. Կ. 6 »
18. Միկուլա.— Դեպի նոր կենցաղը կոլտոզներում 5 »
19. Սկամորխով.—Գաղափարները անասուններին վարակումից 5 »
20. Դուգովսկի.— Առաջին ոգնություն հիվանդացած գյուղ. կենդանիներին 6 »
21. Հնգամյակի յերբորդ ապրվա շեմքին 16 »
22. Դյուդառնաստական միասնական հարկը և դ. տ. սոց. վերակառուցումը 10 »
23. Յա. Տիլնով.—Ինչպես կազմակերպել խոշոր կոլտոզի տնտեսությունը և նրա վարչությունը 1-ին պրակ 8 »
24. Նույնը, 2-րդ պրակ 4 »
25. Ս. Դ. Բուստանջյան.—Անասնաբուծական կոլտոզի և նրա մասնաճյուղերի կառավարումը 20 »

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուսիս. Կովկ. հայ պրոլետարոզներին՝ Աշոտ Լուսինցի բանաստեղծությունները
2. Հյուս. Կովկ. հայկ. պրոլետարոզների ասոցիացիայի անդամներին գրվածքները
3. Ինչպես կազմակերպել խոշոր կոլտոզի տնտեսութ. և նրա վարչությունը—3-րդ պր.
4. 16-րդ կոմունիստական արտելի արտելները
5. Հյուսիսային Կովկասի հնգամյակը.—արդյունաբերություն
6. Խոզաբուծության կազմակերպումը կոլտոզում
7. Կերի հարցը և սխեմացումը
8. Կենդանաբուծության ավագ բանվորների պարտականությունները
9. Զեռնարկ ծխախոտագործության համար
10. Ծագարաբուծություն
11. Թռչնաբուծություն
12. Աշխատանքի կազմակերպումը յեվ յեկամաների բաժանումը կոլտոզում, Լավազույն կոլտոզների փորձը Հյուս. Կովկասում
13. Տրանսպորտը և կախիչը, տեխնիկական ձեռնարկ
14. Կոմսոմոլ և կուսակցության խնդիրները

Գիսել՝ Ростов н-Д., Буденовский пр., 60, Крайнациздат,

Գրոհատարներ բոլոր յերկրներին, միացե՛ք

ՀՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԿՈՒԵՆՈՉՄԻՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԶՈՈՏԵՆՆԻԿ
Ս. Դ. ԲՈՍՏԱՆՆԵՅԱՆ

ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՒԽՈՋԻ ՅԵՎ ՆՐԱ ՄԱՆԱԽՅՈՒՂԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВЪСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՅՈՒՍԻՍՏԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՀՐԱՏԱՐԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԲՈՍՏՈՎ. ԴՈՆ. 1930 թ.

06 MAR 2013

СТАРШИЙ ЗООТЕХНИК СЕВКАВКРАЙКОЛХОЗСОЮЗА
С. Д. БОСТАНДЖИАН

Управление животноводческим колхозом и его отраслями

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

КРАЙНАЦИЗДАТ

61058-67



Газетно-книжная типография Севкавполиграфоб'единения Ростов на Дону.
Крайлит № 09-168 заказ № 829 тираж 1500

Գ Լ Ո Ի Խ Ի

ԿՈՒԽՈՋԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՉՊԻՍԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Ե ԼԱՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱՐՎՈՒՄ

Կոլխոզի ղեկավարությունը կազմակերպելու վրա բացառիկ ուշադրություն պետք է դարձնել: Ամենալավ կլիմայական ու տնտեսական պայմաններում գտնվող և բավական չափով նյութական կարողություն, արտադրության միջոցներ ու աշխատող ձեռքեր ունեցող կոլխոզը խոշոր վնասներ կարող է կրել և անանկանալ, յեթե կոլխոզի ղեկավարությունը և մասնավորապես աշխատանքը կանոնավոր կազմակերպված չլինի:

Աշխատանքի կազմակերպության խնդիրը հանդիսանում է կոլխոզի ղեկավարության ամենակարևոր և հիմնական խնդիրներից մեկը: Աշխատանքի վարձատրության անկանոնությունը (այսինքն յերբ բարեխիղճ և ժրաշան աշխատողը չի խրախուսվում փոքր ինչ ավելի վաստակով, յերբ ծուլ ու անփույթ աշխատողը մտում է աննկատելի՝ շարունակելով ստանալ միջին աշխատավարձ) անդամների մեջ առաջ է բերում ղեկավարության հասցեյին ուղղված անբավականություն ու տրրտունջներ, վորոնք աշխատանքի կազմակերպության գործում կատարված սխալները չուղղելու դեպքում, պատճառ կարող են դառնալ անդամների մասսայական հեռացման և կամ կոլխոզի կազմալուծման:

Գերմանացի տնտեսագետ Ծոն-Իել-Գոլցը, դեռ հին, կալվածատերերի տնտեսությունների մասին ասել է՝ «Խոշոր գյուղատնտեսական արտադրությունը կարող է վասս ունենալ յերբ դեպքում, առաջին՝ յերբ այդ տնտեսությունն առաջ է

տարվում սխալ կազմված պլանով և կամ յերբ այդ պլանը լավ չէ. յերկրորդ՝ յերբ արտադրութեան ղեկավարութիւնը լավ չէ և յերրորդ՝ յերբ թե պլանը և թե ղեկավարութիւնը միաժամանակ լավ չեն»:

Պետք է ասել, վոր հռչակավոր պրոֆեսսորը բոլորովին ուղիղ է նկատել բարձր արտադրութիւն ստանալու խնդրում անտեսութեան ղեկավարութեան կազմակերպման բացառիկ նշանակութեան մասին:

Խոշոր կոլխոզի ղեկավարութեան գործը մենք համարում ենք ուղիղ կազմակերպված միայն այն դեպքում՝

1. Յերբ ամեն մի աշխատող պարզ ու հաստատ կերպով գիտե իր իրավունքներն ու պարտականութիւնները, վորոնք նա կատարում է ժամանակին և պլանի պահանջների համաձայն.

2. Յերբ ամեն մի աշխատող պարզ հաշիվ է տալիս իրեն թե ամբողջ կոլխոզի արտադրական գործունեութեան խնդիրներում և թե մանավանդ աշխատանքների այն ողակում, վորին նա անմիջականորեն մասնակցում է.

3. Յերբ ամեն մի աշխատող գիտե, թե ղեկավարութեան վոր ողակների միջոցով պետք է գործել բոլոր այն զանազան ու բազմաթիվ խնդիրներում, վորոնք դուրս են գյուղատնտեսական արտադրութեան սովորական սահմաններից.

4. Յերբ ամեն մի կատարված աշխատանք ժամանակին ստուգվում է և ճշգրիտ հաշիւ առնվում թե քանակի և վորակի տեսակետից.

5. Յերբ յուրաքանչյուր արտադրական աշխատանք ունի իրեն վորոշ (և հատուկ) կատարողները, վորոնք կարող են ժամանակին խրախուսվել կամ դատապարտվել, նայած կատարած աշխատանքի քանակին և վորակին.

6. Վերջապես, յերբ խոշոր կոլխոզի ղեկավարութիւնը, լավագույն կերպով ոգտագործելով արտադրութեան բոլոր միջոցները, միաժամանակ ապահովում է և ոգտագործում աշխատողների այնպիսի կազմ, վորը համապատասխան լինի վերջիններիս հակուններին և ընդունակութիւններին, յերբ կոլխոզի ղեկավարութիւնը, ամեն կերպ կիրառելով հարվածայնութիւնը

ու սոցմրցումը, լայնորեն ոգտագործում է հենց իրենց՝ աշխատողների ստեղծագործական նախաձեռնութիւնը, վորը հայտնաբերվում է արտադրական խորհրդակցութեան, ռացիոնալիզատորական առաջարկների և առանձին գյուտերի միջոցով:

Գրքույկիս ծավալը թույլ չի տալիս ամբողջովին զբաղվելու խոշոր կոլխոզի ղեկավարութեան կազմակերպման բազմազան խնդիրներով: Այստեղ մենք բավական ենք համարում կանգ առնել գլխավորապես գյուղատնտեսութեան ամենապատասխանատու ճյուղերից մեկի—անասնաբուժութեան վրա:

Գտնելով, վոր ամեն մի աշխատանքի հաջող կատարման ամենաառաջին պայմանը հանդիսանում է այն, վոր ինքն, աշխատողը պարզորեն գիտենա իրեն հանձնարարված գործին վերաբերվող իր բոլոր իրավունքներն ու պարտականութիւնները, մենք առաջին հերթին նշում ենք այն աշխատողների իրավունքներն ու պարտականութիւնները, վորոնք անասնաբուժութեան մեջ կատարում են «կրտսեր հրամանատարների» դերը, զրանք են՝ ավագ ձիապահը, ավագ տավարապահը, ավագ վոչխարապահը և այլն: Իրանից հետո մեջ ենք բերում անասնապահական բրիգադների աշխատանքային որվա կարգն ու աշխատանքների տեսակները, ապա տալիս ենք աշխատանքի վարձատրութեան մեր սխեման ու աշխատանքների ստորաբաժանման (տեսակների) ցուցակը մի քանի հավելվածներով:

ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՆՁՆԵՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԽՈՉՆԵՐԻ ՂԵԿՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պատկերացնենք մի ըուպե, թե ինչ կլինի պատերազմի ժամանակ այն գորքը, վորը բաժանված չէ գնդերի, վաշտերի և այլն և հրամանատարն ինքն է կառավարում ամբողջ գորքն՝ առանց կրտսեր հրամանատարների — գնդապետների, վաշտապետների և այլն: Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր այդպիսի դեպքում հրամանատարը չի կարողանա ապահանջված ժամին անհրաժեշտ հրամաններ արձակել ամեն մի առանձին զինվորին կամ զինվորների անկազմակերպ խմբերին և վեր-

ջիւններս ել չեն գիտենա, թե ո՞վ ինչ պիտի անի: Կտտացվի խառնաշփոթութուն, խուճապ և թշնամին, թեկուզ և շատ փոքրաթիվ, կարող է ջախջախել մեծաթիվ և անկազմակերպ զորքին:

Նույն դրութիւնը կարող է ստեղծվել նաև կոլխոզներում, յեթե այստեղ վորոշ աշխատանքներ կատարելու համար աշխատողների հատուկ բրիգադներ չկազմակերպվեն՝ իրենց բրիգադներով և խմբավարներով միասին:

Կոլխոզների փորձը ցույց է տվել, վոր գործը միշտ կազում է և տնտեսութիւնը դեպի անկումն է գնում, յեթե կոլխոզի արտադրական աշխատանքները բրիգադային սկզբունքով չեն կազմակերպված, յեթե այդ բրիգադները վորոշ ժամանակի համար վորոշ գործ չեն ստանում տնտեսութիւնն այս կամ այն ճյուղի վարիչից և կատարած գործի համար հաշիվ չեն տալիս նրան. յեթե բրիգադներ կան, բայց նրանց կազմը լավ չէ, այսինքն փոփոխական է և կամ չի յենթարկվում բրիգադի աշխատանքների կարգին և այլն, այդ դեպքում գործը միշտ կաղում է և տնտեսութիւնը դեպի անկումն է գնում:

Բանող բրիգադներ լինում են և դաշտաբուծութիւնն և այգեգործութիւնն և բանջարաբուծութիւնն և անասնաբուծութիւնն և գյուղատնտեսական այլ ճյուղերում: Անասնաբուծութիւնն և դաշտաբուծութիւնն բնագավառում աշխատող բրիգադների տարբերութիւնն այն է, վոր անասնաբուծական բրիգադները մըշտական են, այսինքն նրանց կազմը միշտ նույնն է և նրանք աշխատում են ամբողջ տարին, այսինչ դաշտաբուծութիւնն և այլ ճյուղերի բրիգադները լինում են ժամանակավոր, նրանց կազմն ել կախված է կատարվող աշխատանքների սեզոնային բնույթից և ձմեռը նրանք չեն աշխատում:

Բրիգադների մեծութիւնը տարբեր է լինում և կախված է նրանից, թե ինչ աշխատանք է կատարվում, ինչ գործիքներով և ինչ հողամասում, այսինքն ցրված են աշխատում՝ թե համախմբված և այլն:

Ընդհանրապես, դաշտաբուծական, բանջարաբուծական և գյուղատնտեսական մի քանի այլ ճյուղերի բրիգադները սովորաբար բավական մեծ են լինում--մինչև 100 մարդ և ավելի:

վորոնք աշխատանքի բաժանումն ու հսկողութիւնը հեշտացնելու համար դարձյալ բաժանվում են խմբերի, իսկ անասնաբուծական բրիգադները սովորաբար լինում են վոշ մեծ և կարող են խմբերի բաժանված չլինել:

Անասնաբուծական բոլոր բրիգադներին ղեկավարում է անասնաբուծութիւնն վարիչը, վորը կոլխոզի վարչութիւնն առաջ պատասխանատու յե անասնաբուծութիւնն դրութիւնն համար: Իսկ ամեն մի անասնաբուծական բրիգադի իր աշխատանքի, այսինքն իր բրիգադի աշխատանքի համար պատասխանատու յե նախ և առաջ անասնաբուծութիւնն վարիչին, վորի, հրամաններն ել կատարում է և կամ վերջինիս ոգնականին: այսինքն գոտեխնիկին, յեթե, իհարկե, այդպիսին կոլխոզում կա:

Ամեն մի բրիգադ պետք է ունենա իրեն հանձնված աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ինվենտարը (թե կենդանի և թե անշունչ), կերն ու այլ կարևոր առարկաները:

Յուրաքանչյուր աշխատող բրիգադի համար կոլխոզի գյուղատնտեսը, իսկ այդպիսին բացակայելու դեպքում գյուղատնտեսութիւնն այն ճյուղի վարիչը, վորին յենթարկվում է ավյալ բրիգադը,--նախորդը մշակում է աշխատանքի որվա կարգն՝ ամեն մի սեզոնի համար առանձին, տյսինքն գարնանացանի, քաղհանի, հնձի, կախի, տավարն ամռանն արածացնելու և կամ ձմռանը տանը պահելու համար և այլն:

Բրիգադի աշխատանքի որվա այդ կարգը քննութիւնն է դրվում նախ՝ հենց նույն բրիգադի արտադրական խորհրդակցութիւնն և կամ ամբողջ կոլխոզի առաջ (յեթե վերջինն մեծ չէ) և ապա հաստատվում է կոլխոզի վարչութիւնն կողմից: Հաստատվելուց հետո, այդ կարգը պարտադիր է դառնում բոլորի համար և պետք է կատարվի ամենայն ճշտութիւնով: Նրան չկատարողներն ու խախտողները պետք է յենթարկվեն հասարակական կամ վարչական ներգործման՝ իրենց արարքի բնույթի համեմատ:

Անասնաբուծական բրիգադ մեկ անվանում եմ աշխատողների այնպիսի մի խմբակ, վորը հասկապես կազմված է այս կամ այն ակտում, գոմում, խոզանոցում յեվ այլ սեղերում գտնվող համայնացված անասունների խնամելու, կե-

բախրելու յեվ առհասարակ, նրանց սպասարկելու նամար: Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր յերբ համայնացված ա- նաստուճները, որինակի համար, լծկան անաստուճները կամ ձի- յերը, գտնվում են վորևե փոքր շենքում (8—10 գլուխ) և նը- րանց խնամելու համար մի մարդ ել բավական ե, — այդ մի մարդուն բրիգադ անվանելը վոչ մի միտք չունի: Այդպես լի- նում ե առհասարակ կոլխոզի կազմակերպման սկզբնական շըր- ջանում, յերբ դեռևս չեն կառուցվել խոշոր համայնացված շեն- քեր 100 և ավելի անաստուճներին մի տեղ պահելու համար, յերբ կոլխոզը դեռևս ոգտագործում ե իր աղամներին պատ- կանող և ժամանակավորապես հարմարեցված փոքր շենքերը: Այդպիսի դեպքերում միմիանց մոտ դասավորված և միևնույն նպատակին ծառայող մի քանի շենքերը (որինակ, ախոռներն առանձին, խոզանոցներն առանձին և այլն) դարձնել մի խումբ և այդ ցրված բոլոր շենքերին սպասարկող բանվորներից կազ- մել մի բրիգադ, նշանակելով նրանցից մեկին ավագ, կամ բրիգադիր:

Իսկ հին կոլխոզներում, ուր կան արդեն նոր, խոշոր, հա- մայնացված ախոռներ, անպայման ամեն մի այդպիսի շենքի համար անհրաժեշտ ե կազմակերպել առանձին բրիգադ: Դա շատ նպատակահարմար ե այն տեսակետից, վոր բրիգադի բանվորները, միշտ միևնույն շենքում և միասին աշխատելով, հսկում են միմիանց և տեղյակ են՝ թե ինչ ե կատարվում շեն- քում և այդ պատճառով ել ավելի ճիշտ ե պահանջել նրանցից, վոր հանձնարարված աշխատանքները ճշտութեամբ կատարեն, վորովհետև նրանք չեն կարող թերի և կամ անփութորեն կա- տարած աշխատանքի մեղքը գցել ուրիշի վրա:

Ճիշտ ե, նույնիսկ նոր, խոշոր համայնացված գոմերումն ու ախոռներումն ել սպասարկող կազմը շատ մեծ չի լինում, — միջին թվով 10-20 հոգի, բայց այդ հանգամանքը թող չըփո- թեցնի: Աշխատանքին լավ հսկելու, ծուլելին շուտ հայտնա- բերելու, անաստուճներին կանոնավոր խնամելու, գոտեխնիկա- կան պահանջները ժամանակին կիրառելու, ուրեմն և տնտե- սութեան արտադրողականութեունը բարձրացնելու նպատակով ամեն մի շենքի համար պետք ե ունենալ առանձին պատաս- խանատու մի մարդ, այսինքն ավագ բանվոր, կամ բրիգադիր:

Յեթե մի քանի խոշոր ախոռների վրա նշանակել մի բրիգա- դիր, այդ դեպքում նա կդառնա վոչ այլ ինչ, յեթե վոչ մի ավելորդ հրամայող, վորը վոչ կկարողանա աշխատանքներին անձամբ ֆիզիկապես մասնակցել և վոչ ել փոխարինել կոլխո- զի անասնաբուժութեան վարիչին: Միևնույն ե, հանգամանք- ները կատարեն, վոր ամեն մի առանձին շենքում, ուր աշխա- տում են մի քանի հոգի, թեկուզ անպաշտոն կերպով, նրան- ցից մեկին պատասխանատու դարձնել գուշքի ապահովութեան և աշխատանքների նորմալ ընթացքի համար:

Իսկ մենք այնպես ենք պատկերացնում, վոր բրիգադիր- ները, կամ ավելի ճիշտը՝ անասնաբուժութեան ավագ բանվորը լով հրամայող չե: Լինելով իրեն հանձնված շենքերում կա- տարվող աշխատանքների ղեկավարը և ունենալով իրեն յեն- թարկվող աշխատակիցներ, նա ինքն ել անմիջապես մասնակ- ցում ե ֆիզիքական աշխատանքներին: Ուրեմն բրիգադիրն ա- վագ բանվոր ե, այսինքն ամենից ավելի փորձվածը, ամենից ավելի աշխատասերն ու բոլորի համար որինակելին:

ԽՈՂՈՐ ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈԼԽՈԶԻ ՂԵԿԵ- ՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր կոլխոզի ղեկավա- րութեան կազմակերպութեան ձևերը կախված են նրանից, թե գյուղատնտեսութեան վոր ճյուղն ինչ աստիճանի յե զարգա- ցած կոլխոզում, կամ վորքան ե ցրված կոլխոզն և այլն: Այս- տեղ մենք տալիս ենք կոլխոզի ղեկավարութեան ընդհանուր սխեման, վորն անկասկած վորոշ փոփոխութեունների պետք ե յենթարկվի տեղական պայմանների համեմատ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Դաշտային բրիգադները ձևափոխվում են տարվա սեզոնային աշխատանքների համաձայն: Այստեղ ցու- ցադրված բրիգադները կազմված են զարնանացանի աշխատանք- ների համեմատ: Իսկ մյուս սեզոններին, որինակ, կալի ժամանակ, վարող, ցանող և այլ խմբակների փոխարեն կազմվում են խուրձ կրող, կալսող, դարման դիցող, հատիկներ տանող և այլ խմբակներ:

Գ Լ Ո Ի Խ II

ԱՆԱՄՆԱՔՈՒԹԱԿԱՆ ԿՈԼԽՈՉԻ ՂԵԿԱՎԱՐ—ԱԶԽԱՏՈՂ- ՆԵՐԻ (ՐՐԻԳԱԳԻՐՆԵՐԻ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մի կողմ թողնելով կոլխոզի տնտեսութեան ամբողջ ղեկավարութեան խնդիրները քննութեանը, ցույց տանք, թե հիմնականում ի՞նչ պարտականութեաններ են դրվում կոլխոզի ղեկավար աշխատողներին ամեն մեկի վրա և թե վո՞րոնք են նրանց իրավունքները:

Անասնաբուծութեան բնագավառում աշխատողների այստեղ թվածս պարտականութեաններն, իհարկէ, որինակի համար են մեջ բերված. նրանք կարող են ամեն մի կոլխոզում քննութեան յենթարկվել, փոփոխվել ու լրացվել արտադրական խորհրդակցութեաններին կողմից և ապա հաստատվելով վարչութեանից՝ իրագործվել:

Պետք է շեշտել այն, վոր ինչպէս ղեկավար աշխատողներին, նմանապես և մյուս բոլոր կրտսեր բանվորների համար վերոնշյալ ձևով հաստատված հրահանգներն ու աշխատանքների որվա կարգը չպետք է մնան աչքից հեռու, միայն կոլխոզի գրասենյակում. նրանք պետք է լինեն և գրասենյակում և գոմում և ախոռում և այլ շէնքերում, պատերից կախված, ապակու տակ, վորպէսզի ամեն մի անգամ միշտ կարողանա տեսնել ու կարդալ, թե ի՞նչն է ավելի անհրաժեշտն ու ոգտակարը անասնաբուծութեան մեջ և բրիգադներում աշխատողներին համար:

1. ԱՆԱՄՆԱՔՈՒԹՈՒԹՅԱՆ ՎԱՐԻՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնացված անասնաբուծութեան ունեցող յուրաքանչյուր կոլխոզ իր կողմից պետք է ընտրի այնպիսի մի անձնավորութեան, վորն ընդունակ լինի կառավարելու անասնաբու-

ծութեան վերաբերյալ բոլոր գործերը: Անասնաբուծութեան վարիչ կարող է լինել վարչութեան անդամը.— և վոչ անդամը:

ԾԱՆՈՒԹՅՈՒՆ.— Յեթե կոլխոզի վարչութեան մեջ ընտրվում է մասնագետ զոտսիսնիկ, այդ դեպքում ավելի լավ է հենց նրան էլ անասնաբուծութեան վարիչ նշանակել:

2. Անասնաբուծութեան վարիչը նշանակվում է կոլխոզի վարչութեան կողմից:

3. Անասնաբուծութեան վարիչը լիովին պատասխանատու է կոլխոզի համայնացված անասնաբուծութեան ընդհանուր գրութեան, նրա կանոնավոր շահագործման և անասուններին կերով ապահովելու համար, վորի նպատակով նա պիտի աշխատի կոլխոզի արտադրական ծրագրի մեջ մտցնել կերային կուլտուրաների ցանքսի տարածութեան ընդլայնումը:

Պարտադիր անասնաբուժական միջնամուր կիրառելու խնդրում, անասնաբուծութեան վարիչը կոլխոզի վարչութեան հետ միասին ինքն ևս անձնապես պատասխանատու է համապատասխան պետորգանների առաջ:

Նա առանձնապես պատասխանատու է նաև իր ժամանակին անասուններին կերով ապահովելու խնդրում:

4. Անասնաբուծութեան վարիչի վրա դրվում են հետևյալ պարտականութեանները.

ա) Ճիշտ հաշվառման յենթարկել համայնացված բոլոր անասուններին, բաժանելով նրանց ըստ տեսակների, խմբերի (ըստ վորակի և տարիքի):

ԾԱՆՈՒԹՅՈՒՆ.— Համայնացված անասունների ճիշտ հաշվառումը կտտարելու և ըստ նախրի մեծութեան ու տնտեսութեան բնույթի անհրաժեշտ տեղեկութեաններ սխտեմատիկորեն հավաքելու համար կամ հատուկ աշխատակիցներ են նշանակվում գրասենյակի տեխնիկական պետսնալի կազմից, կամ թե անհրաժեշտ տեղեկութեաններ ներկայացնելու պարտականութեանը դրվում է ավագ տավարապահի և այն անձանց վրա, վորոնցից յուրաքանչյուրի պարտականութեանները անասնաբուծութեան մեջ նախապես ճիշտ վորոշվում են:

բ) Լավ կազմակերպել և ուղիղ հիմքերի վրա դնել կոլխոզի անասնաբուծութեանը, այսինքն տավարն ոգտագործել տնտեսավարական և ռացիոնալ ձևերով:

դ) Անասնաբուծութեան համար կոլխոզի անդամներից աշխատակիցներ ջոկել: անասնաբուծութեան զանազան ճյուղերի համար այդ ջոկվածներից հատուկ բրիգադներ կազմել և վերջիններս ղեկավարել բրիգադների միջոցով:

դ) Անասնաբուծութեամբ զբաղվող աշխատակիցներին հրահանգներ տալ:

յե) Համապատասխան կազմակերպությունների համաձայնութեամբ, կոլխոզում աշխատողների համար կարճատև կուրսեր բանալ՝ նրանց վորակը բարձրացնելու նպատակով:

զ) Մասնակցել կոլխոզի կոնտրակտացիայի պայմանագրերի մշակմանը և կատարել անասնաբուծական արտադրանքի թե քանակի և թե վորակի վերաբերյալ բոլոր կետերը:

ե) Մշտական և ժամանակավոր աշխատանքների համար կոլխոզին անհրաժեշտ անասնաբույժ մասնագետներ հրավիրել:

ը) Կիրառել գոտտեխնիկական և անասնաբուժական միջոցներ:

թ) Յեթե կոլխոզը մշտական աշխատող գոտտեխնիկ և անասնաբույժ չունի, այն ղեկավարում ժամանակավորապես խորհրդատու մասնագետներ հրավիրել, այս կամ այն ձեռնարկումներն անցկացնելու նպատակով:

Հետևել, վորպեսզի կոլխոզի գրասենյակը ժամանակին ստանա անասնաբուծութեան հատկացված նպատակային վարկերը: Գործադրել այդ վարկերը վարչութեան վորոշման համաձայն, բաշխելով նրանց անասնաբուծութեան համապատասխան ճյուղերի միջև: Հաշվի առնել ծախսված վարկերի արտադրական արդյունքը:

ի) Անասունները բազմացնելու, կերակրելու, պահպանելու և խնամելու ասպարիզում ամենաշատ արդյունքներ ստանալու նպատակով փորձնական—հետազոտական աշխատանքներ կազմակերպել:

լ) Հարց հարուցել կոլխոզի վարչութեան առաջ անասնաբուծութեան ինտենսիֆիկացիայի մասին և նրա համաձայնութեամբ գործնականում կիրառել այնպիսի ձեռնարկումներ, վորոշումներ ուղղված լինեն անասնաբուծութեան իրական վերակա-

ռուցմանը և նրա ասպրանքայնութեան և շահավետութեան բարձրացմանը:

5. Անասնաբուծութեան վարիչը պարտավոր է պարբերաբար զեկուցումներ տալու կոլխոզի վարչութեանը՝ թե անասնաբուծութեան ընդհանուր կացութեան և թե իր գործնեութեան մասին: Զեկուցումներին անպայման ներկա պիտի լինեն կոլխոզում աշխատող գոտտեխնիկը, անասնաբույժը և բրիգադիրը:

6. Անասնաբուծութեան վարիչը պարտավոր է ստուգելու իր մասնաճյուղի բոլոր աշխատակիցների գործնեյությունը և պահանջելու, վոր նրանք իրենց աշխատանքները՝ թե քանակի և թե վորակի տեսակետից, բարեխղճորեն կատարեն: Հակառակ ղեկավարում նա միջոցներ է ձեռք առնում զանցառուներին տուգանելու համար:

2. ԶՈՏՏԵԽՆԻԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վարչական գծով գոտտեխնիկը անասնաբուծութեան վարիչի ոգնականն է հանդիսանում և նրա հետ միասին պատասխանատու յե անասնաբուծութեան ընդհանուր գրութեան համար, իսկ ագրո-տեխնիկական գծով նա գյուղատնտես—կազմակերպչի ոգնականն է և անմիջապես ղեկավարում է մասնագետների, տեխնիկների և անասնաբուծական ճյուղի վրա աշխատողների գործնեյությունը, ստուգելու համար, թե նրանց աշխատանքները տեխնիկապես ինչքան ուղիղ են:

2. Զոտտեխնիկն աջակցում է գյուղատնտես—կազմակերպչին՝ անասնաբուծութեան և մանավանդ կերի հայթայթման վերաբերյալ կոլխոզի կազմակերպչական—արտադրական ծրագիր կազմելու գործում: Գյուղատնտես—կազմակերպիչ չլինելու ղեկավարում կոլխոզի արտադրական ծրագիրը գոտտեխնիկն ինքն է կազմում:

3. Հսկում է, վոր անասնաբուծական ճյուղի բոլոր աշխատանքները ժամանակին և բարեխղճորեն կատարվեն: մասնավորապես նրա պարտականությունն է վերահսկողութեան յենթարկել անասնաբուծութեան մեջ աշխատողների գործունեյու-

թյունը, հետևել անասուններին ժամանակին կերակրելուն և ջրելուն, հսկել անասունների մաքրության և նրանց առողջապահական պայմանների վրա և այլն: Անասուններին կերակրելու և խնամելու համար նորմաներ ե սահմանում: Նա մանրամասն կանոններ ե մշակում անասունների բոլոր տեսակներն ու խմբերը իրենց արգյունավետության համեմատ պահելու տեխնիկայի վերաբերյալ:

4. Աշխատանքները տեխնիկապես ուղիղ կատարելու վերաբերյալ զոտտեխնիկի տված հրահանգները կիրառվում են զանազան ճյուղերի վարիչների կամ ավագների միջոցով և պարտադիր կերպով կիրառելու տեսակետից՝ այդ հրահանգները համազոր են անասնաբուժության վարիչի հրահանգներին:

5. Ղեկավարում ե անասուններին ցուցադրական նպատակով մեծացնելու, գիրացնելու, ինչպես նաև մրցումների, ցուցահանդեսների և անասնաբուժական դասընթացների ասպարիզում կատարվող աշխատանքները:

6. Մասնակցում ե կառուցումների և անասունների համար շենքերի կահավորման ծրագրեր մշակելու գործին:

7. Կատարում ե զոտտեխնիկական կամպանիայի նախապատրաստական բոլոր աշխատանքները, ինչպես նաև ղեկավարում ե այդ կամպանիայի ընթացքը, որինակ, անասուններին զուգավորելը, բոնիտիրովկան, վոչխարներին խուզելը և լողացնելը, արտադրողներ ջուկելը, գիրացնելու համար անասուն ընտրելը, գիրացնելու ժամանակամիջոց վորոշելը, անպետք յեզներին և ձիյերին բրակ անելն և այլն:

8. Ղեկավարում ե կոլխոզի անդամների զոտտեխնիկական անգրագիտությունը վերացնելու գործը, կազմակերպում ե զոտտեխնիկական դասընթացներ, խմբակներ, եքսկուրսիաներ, ցուցահանդեսներ և այլն: Կուլտուրական—զոտտեխնիկական աշխատանքների մեջ նա ներգրավում ե կոլխոզում գտնվող բոլոր մասնագետներին և ակտիվին:

9. Յեթե կոլխոզում կան ազնվացեղ անասուններ, ապա զոտտեխնիկը նրանց համար հատուկ ցեղային զիրք պահելու գործն ե կազմակերպում:

10. Գյուղատնտես—կազմակերպչի հետ միասին զոտտեխ-

նիկն ևս պատասխանատու յե իրենց կատարած աշխատանքների և նրանից առաջացող բոլոր հետևանքների համար:

3. ԱՎԱԳ ՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ավագ տավարապահը նշանակվում ե յուրաքանչյուր գոմի համար առանձին: Նա գտնվում ե անասնաբուժության վարիչի անմիջական կարգադրության տակ և վերջինիս միջոցով պատասխանատու յե կոլխոզի վարչության առաջ իրեն հանձնարարված աշխատանքների համար:

Ավագ տավարապահի պարտականություններն են.—

2) Հաշվի առնել այն բոլոր կենդանի և անշունչ գույքը, վոր հաշվված ե գոմի ու հորթանոցի վրա և պատասխանատու վինել այդ գույքի ամբողջության պահպանության համար:

Նախ քան իր պաշտոնին անցնելը, ավագ տավարապահը պարտավոր ե ցուցակով ընդունելու գոմում և հորթանոցում գտնվող բոլոր գույքերը: Յեթե անասունները համարով են, կամ թե հատուկ խարանով խարված, ապա այդպիսիներին նա ցուցակով պիտի ստուգի:

3. Հետևել, վորպեսզի անասուններին խնամելու և կերակրելու, ինչպես նաև շենքը մաքրելու և կարգ ու սարքի գցելու աշխատանքները կետ առ կետ և ժամանակին կատարվեն:

4. Նշանակել իրեն յենթարկվող կրտսեր տավարապահների շտառ: Տավար կերակրելու և մաքրելու, գոմն ու հորթանոցը մաքուր պահելու աշխատանքներն ավագ տավարապահը բաժանում ե կրտսեր տավարապահների միջև և նրանցից յուրաքանչյուրին մանրամասնորեն ցույց ե տալիս իրեն պարտականություններն և հանձնարարված աշխատանքների կատարման ժամանակը:

5. Այն խնդիրը՝ մասնակցելու յե արդյոք ավագ տավարապահը ֆիզիքական աշխատանքներին թե վոչ, վորոշում են անասնաբուժության վարիչն ու վարչությունը՝ հաշվի առնելով նրա սպասարկած տավարի թիվը: Հարկ յեղած դեպքում,

ավագ տավարապահին մասամբ Ֆիզիկական աշխատանքներից ազատելը թույլատրելի չէ:

6. Դուրս գրել կովերի և հորթերի համար անհրաժեշտ քանակությամբ կոշտ և ուժեղ կեր և ծախսել ըստ հարկի՝ համաձայն գոտտեխնիկի ցույց տված ամենուրյա բաժնի: Հաշվի առնել ստացված և ծախսված կերի քանակը և այդ մասին հայտնել կոլխոզի գրասենյակին:

7. Հետևել, վոր կրտսեր տավարապահներն իրենց պարտականությունները ժամանակին և լրիվ կատարեն, մանավանդ ուժեղ կեր բաժանելու ժամանակ, թույլ չտալով խախտել առանձին խմբերի կերաբաժինների վերաբերյալ հրահանգները:

8. Ղեկավարել կովերի արհեստական բեղմնավորման գործը, հայտնել գրասենյակին բեղմնավորման ժամանակի մասին, ցույց տալով միաժամանակ այն արտադրողին, վորի հետ կովը գուգավորվել է:

9. Հետևել անասունների առողջությանը և յեթե հիվանդության նշաններ են յերևում (անասունի թույլ և ընկճված վիճակը, ախորժակ չունենալն և այլն), ավագ տավարապահը պարտավոր է այդ մասին անմիջապես հաղորդելու անասնաբուժական պերսոնալին և հարկ յեղած դեպքում ցույց տալու նախնական ոգնություն:

10. Հետևել, վորպեսզի հղի կովերը ծնելուց մի ամիս առաջ մյուսներից առանձնացված լինեն և հղիության վերջին սրերում մշտական հսկողության տակ գտնվեն:

11. Նախ քան կովերին գարնանը արոտավայրեր բաց թողնելը, ավագ տավարապահը պիտի հսկի, վոր կովերի կրճղակները կարգին լինեն և յեթե վերջիններս շատ են աճել, այդ դեպքում կտրել:

12. Հսկել շենքերի ողի բարեխառնության և մաքրության վրա: Հատկապես հետևել, վոր հորթանոցի ողը վենալյացիայի միջոցով միշտ մաքուր պահվի: Պաշտպանել անասուններին միջանցիկ քամիներից:

13. Հետևել կովերի ժամանակին կթվելուն. վերոհիշյալ կանոնը չպահպանելու դեպքում, զեկուցել այդ մասին գոտտեխնիկին:

82010

14. Մտանակցել կաթնատու կովերից անպեղծներին շուկոդ հանձնաժողովի աշխատանքներին:

15. Չոտտեխնիկի հանձնարարությամբ հսկել անասունների փորձնական խմբերի վրա և գրի առնել փորձերի բոլոր արդյունքները:

4. ԱՎԱԳ ԶԻԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ավագ ձիապահը նշանակվում է յուրաքանչյուր ախոռի համար առանձին և գտնվում է անասնաբուժության վարչի կարգադրության ներքո: Իր տրամադրության տակ ունի իրեն պատասխանատու կրտսեր ձիապահներ, վորոնց նա ձիյերին կերակրելու և խնամելու վերաբերյալ հրահանգներ է տալիս:

2. Հենվելով գոտտեխնիկի հրահանգները վրա՝ ծրագրում է ախոռում կատարվող աշխատանքների ներքին կարգը, ինչպես որինակ, կեր տալու և ջրելու ժամանակը, կերաբաժնի բաղադրությունը, աղբ մաքրելը, ձին մաքրելն և այլն:

3. Տեսեսական մասի վարչից (գավխոզ), պահեստապետից և ֆուրաժիից ստանում է կոշտ և խտացված կեր:

4. Հաշվի յե առնում ստացված և ծախսված կերերը:

5. Յուրաքանչյուր անգամ պահանջվող քանակությամբ կեր է բաց թողնում և ձիյերի առանձին տեսակների վրա ամենուրյա ծախսվող կերի համար ցուցակ է կազմում:

6. Հետևում է ախոռի աշխատանքների ժամանակին կատարվելուն, այսինքն թե ախոռում գտնվող և թե աշխատանքից վերադարձող (քրտնած) ձիյերին ժամանակին ջրելուն և կերակրելուն, հսկելով, վոր նրանց շուր և ուժեղ կեր արվեն վոչ շուտ, քան աշխատանքից վերադառնալուց 2 ժամ հետո:

7. Հետևում է ձիյերի առողջությանը և նախնական ոգնություն համար պարտավոր է ժամանակին միջոցներ ձեռք առնելու, իսկ հիվանդ ձիյեր հայտնաբերելու դեպքում, հայտնում է անասնաբուժական պերսոնալին:

8. Հետևում է ձիապահից և այլ պատճառներից առաջա-



ցած վերքերի բուժմանը (ուսերի վզի և բաշի վրա) և հետագայում այդ վերքերի առաջն առնելու համար ձիասարքը կարգի յե գցում և հարմարեցնում ձիուն:

9. Հսկում ե, վոր ձիերը ժամանակին պայտվեն (նարվեն):

10. Ավագ ձիապահն ինքը պետք ե ընտրի ձիասարքերն և հարմարեցնի ձիերին, նրանց վրա համարներ նշանակի և ախոռում կախի հատուկ ցուցակ, վորի մեջ ձիերի անունների կողքին գրված պետք ե լինեն նրանց հարմարեցված անուրի (խոժուտ), լծափոկի և լծասարքի համարները:

11. Ավագ ձիապահը պատասխանատու յե ձիասարքերի ամբողջության և պահպանության համար: Ժամանակին հետևում ե վերանորոգումներին և պահասություններ լրացնելուն:

12. Հաշվի յե առնում ձիերի աշխատանքի որերը:

13. Կոլխոզի գրասենյակին տեղեկացնում ե ծախսված կերերի քանակի և ձիերի աշխատանքի որերի թվի մասին:

14. Հետևում ե, վոր խոնավախո (մոկրեց) առաջ չգա. այդ նպատակով յերբեմն ստուգելու յե, թե ի՞նչ աստիճան մաքուր ե սմբակը և վոտքը, ուշք դարձնելով կապատեղի և խաշի վրա:

15. Յեթե ձին ցույց ե տալիս այնպիսի հիվանդության նշաններ (քթից ծորելը), վոր կարող ե վարակիչ դառնալ, այդ դեպքում անմիջապես հայտնում ե անասնաբուժական պերսոնալին:

16. Ավագ ձիապահը պատասխանատու յե ախոռի վրա գրված գույքի ամբողջության և պահպանության համար և առանց նրա գիտությանն ու թույլատվությանը, այդ գույքը վոչ մի տեղ չպիտի տարվի:

17. Կարճ ժամանակվա աշխատանքի համար (2—3 որ) ավագ ձիապահը ձիերին ապահովում ե բավարար քանակությամբ կերով՝ մինչև նրանց աշխատանքից վերադառնալը. նրանց կերակրելն ու խնամելը հանձնարարում ե այն անձերին, վորոնք աշխատում են այդ ձիերի հետ:

Ավագ ձիապահը աշխատանքից վերադարձած ձիերին զննում ե ընդունում ե՝ նրանց հետ աշխատող մարդկանցից:

Յեթե պարզվեց, վոր ձիերին վոչ հոգատար վերաբերմունք ե ցույց տրվել (ժամանակին չկերակրելը, չջրելը, շատ ձեծելը և այլ աննորմալություններ), այդ դեպքում հանցավորին պատասխանատվության յենթարկելու համար ավագ ձիապահը այդ մասին հայտնում ե անասնաբուժության վարիչին և այն պատասխանատու անձերին, վորոնց կարգադրության ներքո յեն գտնվում ձիերի հետ աշխատողները:

18. Յեթե լծկան ձիերը աշխատանքի յեն ուղարկվում յերկար ժամանակով (դաշտային բրիգադներ և այլ աշխատանքներ), այդ դեպքում ավագ ձիապահը յուրաքանչյուր բրիգադի համար նշանակում ե պատասխանատու և շարքային ձիապահներ, վորոնք կերակրելու և խնամելու յեն ձիերին՝ բրիգադներում աշխատելու ամբողջ ժամանակամիջոցում:

19. Դաշտային բրիգադների համար նշանակված պատասխանատու և շարքային ձիապահները դաշտային աշխատանքներում գտնվելու ժամանակ յենթարկվում են բրիգադիրներին և իրենց բոլոր աշխատանքների համար պատասխանատու յեն վերջիններին առաջ:

20. Ձիերի դաշտային բրիգադներում գտնվելու ժամանակ, ավագ ձիապահի պարտականությունն ե հսկել ախոռում մնացած հիվանդ և անգործ ձիերի վրա. միաժամանակ նա պարտավոր ե ստուգելու դաշտում աշխատող ձիերին և հրահանգները տալու բրիգադների ձիապահներին:

21. Դաշտային բրիգադներում աշխատող ձիերի կերակրման և խնամքի վերաբերյալ նկատվող աննորմալությունների մասին ավագ ձիապահը հայտնում ե դաշտային համապատասխան բրիգադներին և անասնաբուժության վարիչին՝ նման աննորմալությունները վերացնելու նպատակով:

5. ԱՎԱԳ ՅԵՂԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ավագ յեղապահը նշանակվում ե յուրաքանչյուր յեզանոցի համար առանձին. գտնվում ե անասնաբուժության վարիչի անմիջական կարգադրության տակ և վերջինիս միջո-

ցով պատասխանատու յե կոլխոզի վարչության առաջ՝ իրեն հանձնարարած աշխատանքների համար:

2. Ավագ յեղապահը պատասխանատու յե անասունների և ախոռի վրա հաշվված գույքի ամբողջության և պահպանման համար: Ավագ յեղապահն իր տրամադրության տակ ունի կրքուսեր յեղապահներ, վորոնց նա՝ յեղերին կերակրելու և խնամելու վերաբերյալ հրահանգներ և տալիս:

3. Տնտեսական մասի վարիչից, կամ պահեստապետից ստանում և խտացված, իսկ ֆուրաժիրից կոշտ կերեր և նրանց ծախսում և ըստ հարկի:

4. Հաշվի յե առնում ստացված և ծախսված կերերը, բաց և թողնում կերը ըստ յեզների տեսակների (աշխատող և ազատ):

5. Հետևում և, վոր յեզանոցում բոլոր աշխատանքները ժամանակին կատարվեն, այսինքն, թե՛ ախոռում գտնվող և թե՛ աշխատանքից վերադարձող յեզները ժամանակին կերակրվեն և ջրվեն, հսկելով, վոր նրանց ուժեղ կեր և ջուր սրվի վոր շուտ, քան աշխատանքից վերադառնալուց 2 ժամ հետո:

6. Կիրառել և պատասխանատու լինել յեզանոցի աշխատանքների ներքին կարգը պահպանելու համար, կեր բաժանելը, ջրելու ժամանակը, աղբ մաքրելը, յեզներն ու կերատաշտերը մաքրելն և այլն և այլն:

7. Աշխատանքի ժամանակ հետևում և յեզների վզերին, վերքեր և ուռուցքներ լինելու դեպքում բժշկում և և վնասվելուց զերծ պահելու համար հետևում և, վոր լուծերը վզերին լավ նստեն:

8. Չոկում և հավասար ուժի զույգ յեզներ և հսկում և, վոր յեզներն ուղիղ կապվեն մտուրներին, այսինքն ուժեղները թույլերից կարճ կապվեն, վորպեսզի վերջիններին չխրանեցնեն:

9. Արածացնելու ժամանակ հետևում և որվա ժամերի կարգը պահպանելուն, ուղիղ արածացնելուն և ժամանակին ջրելուն: Հսկում և, վոր արտավայրը տարածության համեմատ և նպատակահարմար ձևով ոգտագործվի:

10. Հետևում և արտավայրում գտնվող յեզների առողջությանը, հիվանդ յեզան ցույց և տալիս նախնական ոգնություն և հիվանդանալու բոլոր դեպքերի մասին ժամանակին հայտնում և անասնաբուժական պերսոնալին:

11. Աշխատանքի ժամանակ հաշվի յե առնում բանվորական որերը:

12. Ծախսված կերի քանակի և յեզների աշխատած որերի թվի մասին տեղեկացնում և կոլխոզի գրասենյակին:

13. Մասնակցում և ծեր և աշխատանքի համար անպետք յեզներին ջոկելուն:

14. Կարճ ժամանակվա աշխատանքի համար (մինչև 2 որ) ավագ յեղապահը ապահովում և յեզներին բավարար քանակությամբ կերով՝ մինչև նրանց աշխատանքից վերադառնալը և նրանց կերակրելն ու խնամելը հանձնարարում և նրա հետ աշխատողներից մեկն ու մեկին: Աշխատանքից վերադարձած յեզներին գնում և նրանց հետ աշխատողներից ընդունում և: Աննորմալություններ նկատելու դեպքում (ժամանակին չկերակրելը, չջրելը և այլն), հայանում և այդ մասին անասնաբուժական վարիչին և յեզների հետ աշխատողներից ավագին, հանցավորին պատասխանատուության յենթարկելու համար:

15. Յեզներին յերկար ժամանակ աշխատանքի ուղարկելու դեպքում (դաշտային և այլ բրիգադներ), ավագ յեղապահը յուրաքանչյուր բրիգադի համար նշանակում և գլխավոր և շարքային յեղապահներ, վորոնք պարտավոր են կանոնավոր խնամելու և կերակրելու յեզներին՝ բրիգադներում գտնվելու ժամանակամիջոցում:

16. Դաշտային բրիգադները համար նշանակված գլխավոր և շարքային յեղապահները, յեզների դաշտային բրիգադներում գտնվող ամբողջ ընթացքում յենթարկվում են բրիգադիրներին և իրենց աշխատանքների համար ամբողջապես պատասխանատու յեն նրանց առաջ:

17. Այդ ժամանակ մշտական ավագ յեղապահի պարտականությունն և հսկել յեզանոցում մնացած հիվանդ և շաշխատող յեզների վրա, միաժամանակ ստուգել դաշտային բրիգադ-

ներում աշխատող յեղներին և յեղապահներին հրահանգներ տալ:

18. Գաշտային բրիգադներում աշխատող յեղների կերակրման և խնամքի գործում նկատվող բոլոր աննորմալությունների մասին, ավագ յեղապահը հայտնում է բրիգադիւրներին և անասնաբուժութեան վարչին՝ նման աննորմալությունները վերացնելու նպատակով:

6. ԱՎԱԳ՝ ՏԱՎԱՐԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ — ՏԱՎԱՐԻՆ ԱՐԱԾԱՅՆԵԼՈՒ ՅԵՎ ԳԻՐԱՅՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

1. Նախընտրելի և գիրացվող տավարի ավագ տավարապահը նշանակվում է յուրաքանչյուր գոմի համար առանձին և ունի ոգնականներ, վորոնք խնամում են տավարի ամեն մի խմբին. դրա վերաբերյալ հատուկ հրահանգների սահմաններում ամբողջովին յենթարկվում են ավագ տավարապահին և իրենց աշխատանքների համար պատասխանատու յեն նրա առաջ:

2. Ամառ ժամանակ ավագ տավարապահը հետևում է, վոր արածացնելու ժամերի կարգն ուղիղ գործադրվի, տավարը կանոնավոր արածացվի և ջրվի, արոտավայրերն իրենց տարածութեան համեմատ և լավագոյն, արդյունավետ կերպով ոգտագործվեն: Զոտտեխնիկի հանձնարարութեամբ, հսկում է գիրացվող տավարի փորձնական խմբի վրա:

3. Արոտավայրում հետևում է տավարի հիվանդութեաններին, մանավանդ տիմպանիտին (փորի փքվելը), հիվանդ տավարին նախնական ոգնութեան և ցույց տալիս և հիվանդանալու բոլոր դեպքերի մասին ժամանակին իրագեկ է դարձնում անասնաբուժական պերսոնալին:

4. Նախընտրելի տավարը գոմում պահելու դեպքում, ավագ տավարապահը մատղայներին բաժանում է առանձին խմբերի՝ ըստ իրենց տարիքի, յեթե այդ բանը արածատեղում արված չէ:

5. Զոտտեխնիկի հրահանգների համաձայն՝ ավագ յեղապահը անասուններին սպտարկող պերսոնալի համար ծրա-

գրում է աշխատանքների ներքին կարգ (կեր տալու ժամանակը, աղբ և կերատաշտ մաքրելն և այլն):

6. Հետևում է թույլ և դանդաղ մեծացող անասուններին և նրանց աննորմալությունն ուժեղացնելու նպատակով՝ առանձին խմբերի յե բաժանում:

7. Պահեստապետից և ֆուրաժիրից ստանում է կոշտ և խտացրած կեր, հաշվի յե առնում ստացված և ծախսված կերերի քանակը, յուրաքանչյուր անգամ կեր բաժանելու համար անհրաժեշտ քանակութեամբ կեր է բաց թողնում և տարբեր տեսակի տավարների համար ամենուրյա ծախսվող կերի ցուցակ է կազմում:

8. Հետևում է, վոր բոլոր աշխատանքները ժամանակին կատարվեն (կերակրելը, ջրելը, կեր բաժանելը, աղբ, կերատաշտ և իրենց, անասուններին մաքրելը և այլն):

9. հետևում է անասունների հիվանդութեաններին, հիվանդներին ցույց է տալիս նախնական ոգնութեան և հիվանդանալու բոլոր դեպքերի մասին ժամանակին հայտնում է անասնաբուժական պերսոնալին: Ծախսված կերերի մասին տեղեկութեաններ է տալիս կոլխոզի գրասենյակին:

10. Պատասխանատու յե գիրացվող տավարին հատկացված գույքի ապահովութեան և ամբողջութեան համար և առանց նրա գիտութեանն ու թույլատվութեանն՝ այդ գույքը վոչ մի տեղ չպիտի տարվի:

7. ԱՎԱԳ՝ ԿԹՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ամեն մի առանձին գոմում գտնվող կովերի համար ավագ կթող է նշանակվում, վորը յենթարկվում է անասնաբուժութեան վարիչին և իրեն հանձնարարված աշխատանքների համար պատասխանատու յե նրա առաջ:

2. Կթելու տեխնիկայի վերաբերյալ բոլոր կանոնները բարեխղճորեն և ժամանակին գործադրելու խնդրում ավագ կթողը հանդիսանում է անմիջական պատասխանատու անձ:

3. Ավագ կթողն իր տրամադրութեան տակ ունի կթողներ, վորոնք իրենց աշխատանքների համար ամբողջովին պատասխանատու յեն նրա առաջ:

4. Հետևում է, վոր ամեն մի կով ինամքով և մաքուր կթվի, հակառակ պարագային հանցավորին պատասխանատուութեան է յենթարկում՝ գոմի ներքին կանոնադրութեան համաձայն:

5. Հսկում է ամանների, սրբիչների և այլ իրերի մաքրութեան վրա, ինչպես նաև հետևում է, վոր կթողները կով կթելուց առաջ իրենց ձեռքերը լվանան:

6. Գրի յե առնում ամեն մի կովի տված կաթի քանակը և այդ մասին պարբերաբար տեղեկութեւններ է տալիս կոլխոզի գրասենյակին: Կթելուց անմիջապես հետո՝ կաթը կաթնատուն է հանձնում:

7. Հսկում և պատասխանատու յե հորթերին ժամանակին և կանոնավոր կերակրելուն՝ մինչև անարատ կաթով կերակրելուն վերջ տալը:

8. Հսկում է կովերի կուրծքերի առողջութեան վրա և հիվանդանալուց զերծ պահելու համար պարտավոր է նախագուշացման միջոցներ ձեռք առնել:

9. Պատասխանատու յե կթողներին հանձնված հատուկ գուշքերի ամբողջութեան և պահպանութեան, ինչպես նաև վորակի համար՝ մինչ կաթնատուն հանձնելն ու հորթերին կերցնելը:

8. ՓՈՒՐԱԺԻՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կոլխոզի ֆուրաժիրն անմիջապես յենթարկվում է տրնտեսական մասի վարիչին:

2. Նրա պատասխանատուութեան տակ են գտնվում բոլոր կոշտ կերերն և արոտավայրերը:

Բացի դրանից, նա հետևում է սիլոսացված կերի կանոնավոր և հաշվով բաց թողնելուն և կերը վերցնելուց հետո սիլոսային փոսերը կամ աշտարակները փակելուն:

3. Ամառ ժամանակ հսկում է արոտավայրերի և խոտհարքների ընդհանուր դրութեան վրա և թույլ չի տալիս, վոր խոտհարքները փչանան՝ տավարին անկանոն արածացնելու պատճառով: Ուշք է դարձնում, վոր տավարի տարբեր խմբերին հատկացված արոտավայրերը կանոնավոր ոգտագործվեն, հսկում է, վոր ոտար տավարները չուտեն և վոտնակոխ չանեն կոլխոզի արոտավայրերը:

4. Սոտ հնձելու և կալի ժամանակ դեղերի համար տեղ է պատրաստում, հետևում է, վոր խոտն ու դարմանը կանոնավոր դիզվեն և դրա համար ինքը պատասխանատու յե:

5. Կերը դիզում է ըստ տեսակների՝ չխառնելով վատ վորակի խոտերը լավերի հետ, ինչպես որինակ, անպետք խոտը՝ մաքուր սեզի հետ, գարու հարդը՝ ցորենի հարդի հետ և այլն:

6. Հետևում է դեղերի ընդհանուր դրութեանը և խոտն անձրևներից և ջուր ձձելուց պահպանելու համար միջոցներ է ձեռք առնում, վորպեսզի ժամանակին դաշտից գյուղ փոխադրվի:

7. Նախորոք միջոցներ է ձեռք առնում՝ դեղերը գողերից և անասուններից պաշտպանելու համար:

8. Չմեռ ժամանակ կեր է բաց թողնում տնտեսական մասի վարիչի կարգադրութեան համաձայն և հետևում է, վոր կերը դեղերից կանոնավոր վերցվի — չթափթփվի և չկոխկոտվի:

9. Տնտեսական մասի միջոցով հաշվապահին տեղեկութեւններ է տալիս իր պահեստից ծախսված կոշտ կերերի քանակի մասին:

9. ԱՎԱԳ ՎՈՉԽԱՐԱՔՈՒՅԺԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ավագ վոչխարաբուծը նշանակվում է յուրաքանչյուր փարախի համար առանձին և պատասխանատու յե վոչխար պահելու և կերակրելու վերաբերյալ գոտտեխնիկի տված հրահանգների ուղիղ և բարեխիղճ գործադրման համար:

2. Ամեն մի հոտի համար կեր ստանալու վերաբերյալ

պահանջագիր և գրում և ծախսված կերերի մասին գրասենյակին տեղեկութուններ և տալիս:

3. Գրի յե անցկացնում ցեղային գառների ծնունդը, բուրբի համար առանձին համարներ և նշանակում և արձանագրում և ցեղային վոչխարների հատուկ գրքում:

4. Զոկում և ցեղային մատղաշ զոչերին, բրակ և անում և կռտում ցեղի համար անպետքներին. միաժամանակ բրակ և անում հասակավոր վոչխարներին՝ ըստ իրենց տարիքի և գրության:

5. Գառներին ժամանակին հեռացնում և մայրերից: Գառներից առանձին հոտ և կազմում և նրանց հատկացնում և ամենալավ խոտ ունեցող արոտավայրեր:

6. Ընդհանուր հոտից առանձնացնում և զանգաղ մեծացող, նիհար և հիվանդ վոչխարներին:

7. Պատասխանատու յե հոտերին հատկացված գուլքի ամբողջության և ապահովության համար:

8. Ղոչերին ժամանակին պատրաստում և զուգավորման:

9. Վոչխարին փարախում պահելու ժամանակաշրջանում ղեկավարում և նրանց կերակրելու գործը՝ համաձայն գոտեխնիկի ցուցմունքների, սահմանում և որվա աշխատանքի ժամերի կարգը և հակում և կանոնավոր և ժամանակին կեր տալու և ջրելու աշխատանքների վրա:

Բոնիտյորի ցուցմունքի համաձայն, զոչերին բաժանում և զանազան հոտերի միջև:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բոնիտյորը հրավիրվում և կոլխոզե կողմից՝ բոնիտիրովկայի ժամանակ և իբրև մշտական աշխատակից, կոլխոզում կարող և գոյութուն չունենալ: Սակայն ցանկալի յե, վոր ցեղերի աղնվացման գործով զբաղվող խոշոր տնտեսութուններն ունենան մշտական աշխատող բոնիտյոր:

10. Ֆուրաժիից և պահեստապետից ստանում և կոշտ և խտացված կերեր, հաշվի յե առնում ստացված և ծախսված կերերի քանակը:

11. Վոչխարների ծնելու ժամանակ հատուկ մարդիկ և նշանակում, վորոշում և հովիվների բրիգադների իրավունքներն ու պարտականութունները:

13. Արածացնելու համար որվա ժամերի կարգն և սահմանում, հետևում և կանոնավոր արածացնելուն և ջրելուն և յեթե առաջուց հատկացված արոտավայրերը փչանում կամ խանձվում են, այդ դեպքում նա պարտավոր և նոր արոտավայրեր ճարել:

14. Վոչխարներին խուզելու ժամանակ ղեկավարում և խուզող բրիգադների աշխատանքները, հետևում և, վոր բրդի տեսակավորումը ճիշտ կատարվի և բուրդը կանոնավոր դարսվի ու կապվի: Մինչև տնտեսական մասին հանձնելը նա պատասխանատու յե բրդի ամբողջության և պահպանության համար:

15. Հետևում և վոչխարների տարափոխիկ և այլ հիվանդութուններին, համաճարակի առաջանալու մասին ժամանակին հայտնում և անասնաբուժական պերսոնալին: Ղեկավարում և հասարակ հիվանդութունների (քոս, վորդնել և այլն) բուժման գործը: Քոսի տարածման առաջն առնելու համար հիվանդ վոչխարներին առանձնացնել և լողացնել և տալիս:

16. Ամեն մի հոտի վոչխարների հաշիվն և պահում (ըստ հասակի և սեռի):

17. Սատկող վոչխարների և գառների մասին արձանագրութուն և կազմում և ամեն մի դեպքի մասին անմիջապես գեկուցում և գոտեխնիկին:

18. Ավագ վոչխարաբույժը իր տրամադրության տակն ունի հովիվներ:

19. Ավագ վոչխարաբույժը պատասխանատու յե վոչխարների այն փորձնական խմբերի համար, վորոնք պահվում են հատկապես գիրացնելու, աղնվացնելու ու խուզվելու համար և գոտեխնիկի ցուցմունքով պատշաճ ձևով գրի յե առնում հատուկ դիագրամների և վիճակագրական թերթիկների վրա:

20. Զոտեխնիկի ցուցմունքների համաձայն, ավագ վոչխարաբույժը պարտավոր և հատուկ ցեղային գիրք պահելու ցեղային վոչխարների, զոչերի և գառների համար:

21. Զուգավորման կամպանիայի ժամանակ պարտավոր և ճիշտ հաշվի առնել եգերի հղիացումը՝ կազմելով ցեղային

արձանագրութիւնն, վորտեղ պետք է ցույց արված լինի արտադրողի և հղիացող եզրի ծագումը:

22. Պարբերաբար, ամսվա մեջ առնվազն մի անգամ, ըստուգում է բոլոր հոտերի վոչխարները՝ գրի առնելով ամեն մի հովվի հոտում սատկած վոչխարներն և մորթիները քանակը:

23. Սատկած վոչխարների և մորթիների քանակի մասին պարբերաբար տեղեկութիւններ է տալիս գրասենյակին:

10. ԱՎԱԳ ԽՈՂԱԲՈՒՅՑԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ավագ խողաբույժը նշանակվում է յուրաքանչյուր խոզանոցի համար առանձին և պատասխանատու յե խողերին պահելու ու կերակրելու վերաբերյալ գոտաեխնիկի տված հրահանգների ճիշտ և բարեխիղճ կիրառման համար:

2. Իր տրամադրութիւն տակ ունի մշտական աշխատող խողապահներ, վորոնք ամբողջովին յենթարկվում են իրեն և իրենց աշխատանքների համար պատասխանատու յեն նրա առաջ:

3. Ղեկավարում է կեր պատրաստելու և բաժանելու գործը, հետևում է ինչպես գոճիներին (խողի ձագ), նույնպես և մեծ խողերի կերակրմանն և խնամքին:

4. Հետևում է մայր խողերի ծնելուն և ժամանակին ձագերին մայրերից կտրելուն:

5. Հսկում է, վորպեսզի կերը կանոնավոր և գոտաեխնիկի սահմանած նորմայով արվի, հետևում է կերատաշտերի մաքրութիւն, հատակների չորութիւն և շենքի ողափոխութիւն:

6. Հաշվի յե առնում կերերն և խողերը՝ գոտաեխնիկի ցույց տված ձևով:

7. Հետևում է անասունների առողջութիւնը և հիվանդանալու ամեն մի դեպքում հայտնում է գոտաեխնիկին:

9. Պատասխանատու յե խոզանոցի վրա հաշվված գույքի ամբողջութիւն և պահպանութիւն համար: Առանց իրեն գիտութիւն և թույլտվութիւն՝ այդ գույքը վոչ վոք իրավունք

չունի խոզանոցից դուրս տանելու: Նա ամեն ուր պարտավոր է կատարելու վիճակագրութիւն և հաշիվների վերաբերյալ կոլխողի հաշվապահութիւն բոլոր պահանջները:

10. Հսկում է խողերի վործնական խմբերի վրա, վորոնք գոտաեխնիկի ցուցմունքների համաձայն, պահվում են հատկապես գիրացնելու, ազնվացնելու և այլ նպատակներով:

11. ԱՎԱԳ ԹՈՒՉՆԱԲՈՒՅՑԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ավագ թուչնաբույժը պատասխանատու յե կոլխողի թուչնաբուծութիւն ընդհանուր կացութիւն, շենքի, բակի և թուչնանոցի սանիտարական դրութիւն համար:

2. Նրա պարտականութիւնն է պահպանել ինկուբացիայի վերաբերող բոլոր կանոնները, այսինքն ինկուբատորները ճիշտ և ուղիղ տեղավորել, ձու գնելուց առաջ ստուգել ինկուբատորները, ավաստպով ձվերը գնել, աշխատող ինկուբատորները զետեղել ու գործի գցել, ամենայն ճշտութիւն և խիստ կերպով հսկել ինկուբատորների տաքացնող ապարատի և ջրի ամանների վրա: Չվից նոր դուրս յեկած ձուտերին ժամանակին ինկուբատորից ելեվեր տեղափոխել՝ հսկելով նրանց չորացնելուն:

3. Հսկել ձուտերին ժամանակին կերակրելու և նրանց առողջութիւն վրա:

4. Հետևել, վոր կոլխողում գտնվող թուչնանոցները բարեխղճորեն խնամվեն և պահպանվեն, որինակ, թուչնաներին ժամանակին կերակրել, ջրել, զբոսանքի հանել, թուչնանոցները մաքրել և այլն:

5. Դուրս գրել և ծախսել կերերը նորմայի համաձայն:

6. Փոքր աքլորներին վառեկներից զատել, ինչպես նաև պառավ հավերին և այլ թուչնաներին բրակ անել:

7. Ստացված ձվերը հաշվել և պահեստին հանձնել:

8. Ավագ թուչնաբույժն իր տրամադրութիւն տակ ունի

մի քանի կրտսեր թուչնապահներ, վորոնք իրենց կատարած աշխատանքների համար ամբողջովին պատասխանատու յեն նրա առաջ:

9. Ավագ թուչնաբույժը - պատասխանատու յե թուչնանոցի վրա հաշվված գույքի ապահովության և ամբողջության համար:

10. Արտադրական և բանվորական ուժերի բաշխման ծրագրների համաձայն, նա պարտավոր ե թուչնաբուծական աշխատանքների մեջ քաշելու կոլխոզի կանանց և անչափահասներին՝ կազմակերպելով նրանցից թուչնաբուծական բրիգադներ:

11. Պարտավոր ե հսկելու հավերի այն փորձնական խումբերի վրա, վորոնք զոտտեխնիկի կողմից նշանակված են ազնվացնելու, զիրացնելու և այլ նպատակների համար: Զոտտեխնիկի կամ գյուղատնտես—կազմակերպչի ցուցումների համաձայն, զրի պիտի առնե ամեն մի խմբի տված արդյունքները:

12. Պարտավոր ե ամեն որ հաշվապահության հանձնելու թուչնաբուծության ընդհանուր զրույթյան վերաբերող հաշվառին և վիճակագրական բոլոր փաստաթղթերը:

12 ԱՎԱԳ ԺԱՊԱՐԱՐՈՒՅՑԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավագ ճագարաբույժի պարտականություններն են. —

1. Ամեն առավոտ գննում ե ձագերին՝ նրանց առողջապահական դրությունը պարզելու նպատակով:

2. Ամեն որ նայում ե կերատաշտերը, մսուրներն և վանդակները՝ պարզելու համար նրանց սանիտարական վիճակը:

3. Հետևում ե, վոր վանդակներն և մսուրները կանոնավոր և ժամանակին մաքրվեն և կերատաշտերը լվացվեն:

4. Քննության ե յենթարկում զուգավորման տարվող ճագարներին, այսինքն ստուգում ե թե եգերի և թե արունների սեռական օրգանները և զուգավորման ժամանակ պահպանում ե առողջապահական բոլոր կանոնները:

5. Նոր ծնվածներին արձանագրում ե զուգավորման գրքում:

6. Զուգավորման գրքով ստուգում ե, թե եգերը յերբ են ծնելու: Քննում ե բները, որ առաջ սարքում և ծնուններից հետո յուրաքանչյուր բնում ձագերին կարգի յե բերում:

7. Ճիշտ հաշվառման ե յենթարկում այն արուններին, վորոնք արձակվում են զուգավորման համար, զրի առնելով, թե նա յերբ և վոր եգին ե զուգավորել:

8. Զտում ե հիվանդ անասուններին և ժամանակին նրանց մեկուսացնում ե՝ մինչև անասնաբույժի գալը:

9. Հետևում ե, վոր հաջորդ օրվա կերը յերեկոյան պատրաստի:

10. Վորոշված ժամանակին կշռում ե ցեղային ճագարներին:

11. Հաշվի յե առնում ամենօրյա ծախսվող մթերքների քանակը:

12. Յերեկոյան, նախ քան ճագարանոցներ փակելը, շըրջում ե պահապանի հետ միասին և ամբողջ գույքը նրա պահպանությանն և պատասխանատվությանն ե հանձնում:

13. Ավագ ճագարաբույժն ունի կրտսեր ճագարաբույժներ, վորոնք իրենց աշխատանքների համար պատասխանատու յեն նրա առաջ:

14. Պատասխանատու յե ճագարանոցի վրա հաշվված կենդանի և անշունչ գույքերի ամբողջության և պահպանության համար:

15. Զոտտեխնիկի ցուցմունքի համաձայն, պարտավոր ե հսկելու ազնվացման, փորձնական կերակրման և այլ նպատակների համար պահվող ճագարների փորձնական խմբերի վրա և հատուկ փորձնական ձևերի համաձայն՝ զրի անցկացնելու փորձերի արդյունքները:

16. Նա ամեն որ պարտավոր ե հանձնելու ճագարաբուծության վերաբերյալ հաշվապահական և վիճակագրական բոլոր տեղեկությունները՝ համաձայն հաշվապահության հրահանգներին:

Գ Լ Ո Ի Խ III.

ՀԱՄԱՅՆԱՅՎԱԾ ԳՈՄՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱԶԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐՎԱ ԿԱՐԳԸ—ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՊԱՆԱ ՏԵՂՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԶԻՋԱՆՈՒՄ

ՃԱՄԵՐԸ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ
Գիշերվա ժ. 3-ին	Կովի տակը մի թեթև մաքրել: Գոմի ողբ թարմացնել (գիշերվա պահապան):
» ժ. 3 ¹ / ₂ -ին	Կուրծերը լվանալ, կթել, կիթը կշռել և գրի առնել կթված կաթի քանակը: Կաթն ուղարկել, ամանները լվանալ ու հավաքել: Հորթերին կերակրել:
Առ. ժ. 5-ին	Ուժեղ և հյուսթալի կեր պատրաստել և որաբաժնի կիսու չափ տալ անասուններին:
» ժ. 5 ¹ / ₂ -ին	Որաբաժնի ¹ / ₃ -ի չափ կոշա կեր տալ այն դեպքում, յերբ հյուսթալի կերն արմատապտուղներից է բաղկացած:
» ժ. 8-ին	Գոմը և բոլոր անասուններին հիմնովին մաքրել, գոմի բոլոր դռները բանալ և ողբ թարմացնել, անասուններին ջրել և զբոսանքի հանել: Աղբը դուրս տանել և անասունների տակը հարդ փռել:
» ժ. 10 ¹ / ₂ -ին	Կուրծերը լվանալ, կթել, կաթը կշռել և գրի առնել, կաթը գոմից ուղարկել, ամանները լվանալ ու հավաքել: Հորթերին կերակրել:
» ժ. 11 ¹ / ₂ -ին	Պատրաստել ու տալ կես բաժին ուժեղ և կես բաժին հյուսթալի կեր:

ՃԱՄԵՐԸ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ
» ժ. 15-ին	Տավարին ջրել և զբոսանքի հանել, այդ ժամանակում յերկրորդ անգամ մաքրել գոմը և կերատաշտերը: Աղբը դուրս տանել, հարդ փռել և գիշերվա համար կեր պատրաստել:
» ժ. 18-ին	Կուրծերը լվանալ: Կթել, կիթերը կշռել և գրի առնել, կաթն ուղարկել, ամանները լվանալ ու հավաքել և հորթերին կերակրել:
» ժ. 19 ¹ / ₂ -ին	Գիշերվա համար կոշա կեր բաժանել:
Յերեկ. ժ. 7 ¹ / ₂ -ին	Գիշերային պահապանն անցնում է իր աշխատանքին:

Գոմի աշխատանքների որվա կարգը—արածացնելու ժամանակամիջոցում

ՃԱՄԵՐԸ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ
3-ից մինչև 4 ¹ / ₂ -ը	Կթել:
5-ից » 11 ¹ / ₂ -ը	Արածացնել:
11 ¹ / ₂ -ից » 12-ը	Ջրել:
12-ից » 13-ը	Անասուններին բերել բինեն և կթել:
13-ից » 14-ը	Անասուններին մաքրել և ուժեղ կեր տալ:
14-ից » 18 ¹ / ₂	Անասունները հանգստանում են բինեյում:
18 ¹ / ₂ -ից » 20 ¹ / ₂	Արածացնել:
20 ¹ / ₂ -ից » 21-ը	Ջրել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ամառվա յերկրորդ կեսին, տաք որերում, կովերին կարելի է չե նույնիսկ գիշերները արածեցնել:

Աշխատանքների որվա կարգը յեզանցում—յեզների աշխատանքի ժամանակաբաշխում

ԲԱՆՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԵՐԸ		Աշխատանքների անունները յեվ հանգստի ժամերը
ԳԱՐՆԱՆԸ ՅԵՎ ԱՇՆԱՆԸ	ԱՄԱՌԸ	
Առավոտյան		
5 — 8	4 — 8	Յեզներին աշխատեցնել դաշտում: Նախ քան յեզներին լծելը, բանփորներին նախաճաշ տալ
8 — 8 ^{1/2}	8 — 8 ^{1/2}	
8 ^{1/2} —11	8 ^{1/2} —11	Աշխատեցնել.
11 — 1 ^{1/2}	11 — 1 ^{1/2}	Ճաշի ընդմիջում, յեզներին արածացնել կամ մտրում կերակրել.
1 ^{1/2} — 2	1 ^{1/2} — 2	Ջրել և լծել.
2 — 5	2 — 4	Աշխատեցնել.
	4 — 4 ^{1/2}	Կեսորվա ընդմիջում՝ առանց արձակելու.
	4 ^{1/2} —7 յեր.	Աշխատեցնել.
ցերեկ. յեր.		
5 — 6 ^{1/2}		Կերակրել կապած կամ արածատեղում.
6 ^{1/2} — 7		Ջրել.
7 — 9 ^{1/2}		Հանգստանալ.
9 ^{1/2} —11 ^{1/2}		Կերակրել կապած կամ արածատեղում.
գիշեր		
11 ^{1/2} — 2		Հանգստանալ.
2 — 4		Կերակրել կապած կամ արածատեղում.
առավոտյան		
4 — 5		Ջրել և լծել.
	7 — 9	Արածացնել.
բանվ. որ	9 — 9 ^{1/2}	Ջրել.
	9 ^{1/2} —11 ^{1/2}	Հանգստանալ.

ԲԱՆՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԵՐԸ		Աշխատանքների անունները յեվ հանգստի ժամերը
ԳԱՐՆԱՆԸ ՅԵՎ ԱՇՆԱՆԸ	ԱՄԱՌԸ	
	գիշեր.	
	11 ^{1/2} — 1 ^{1/2}	Արածացնել.
	1 ^{1/2} — 2 ^{1/2}	Հանգստանալ.
	2 ^{1/2} — 3 ^{1/2}	Արածացնել.
	3 ^{1/2} — 4	Ջրել և լծել:

Որվա կարգը—չափասելու ժամանակ

Առավոտյան	Առավոտյան	
5 — 7	4 — 6	Արածացնել: Յեթե ցողը կա, ապա տավարն արձակել ցողը վերջանալուց հետո.
7 — 8	6 — 7	Հանգստանալ արածատեղում.
8 — 11	7 — 9	Արածացնել.
	9 — 10	Շոգ որերին վերադարձնել ջրելու տեղը և ջրել.
11 — 12	10 — 11	Նույնը գոլ որերին.
	10 — 2	Շոգ որերին ճաշի ընդմիջում.
12 — 1	11 — 1	Նույնը գոլ որերին.
1 — 6	1 կամ 2-ից մինչև 6-ը	Արածացնել.
	6 — 7	Ջրել և հանգստացնել.
	7 — 9	Արածացնել.
6 — 6 ^{1/2}	9 — 9 ^{1/2}	Վերադարձնել բենեն.
	9 ^{1/2} — 12	Հանգստացնել բենեյում.
	12 — 3	Գիշերն արածացնել.
	3 — 4	Հանգստանալ.

Յեզանցներում կասարվող աշխատանքների որվա կարգը—
բանող յեզներին ձևանք կապած սեղում պահելիս

Ճ Ա Մ Ե Ր	Աշխատանքների անունները յեվ հանգստի ժամերը
Առավոտ. 5—6	Կեր բաժանել.
6—7 ^{1/2}	Աղբ մաքրել.
7 ^{1/2} —8	Բանվորներին նախաճաշ տալ.
8—8 ^{1/2}	Ջրել.
8 ^{1/2} —11	Յեթե յեզները կապված են, մաքրել նրանց և սայլերով կեր բերել.
11—12	Կեր բաժանել.
ցերեկ. 12—1	Ճաշի ընդմիջում.
1—3	Սայլերով կեր բերել և աղբ մաքրել.
3—3 ^{1/2}	Ջրել.
3 ^{1/2} —4 ^{1/2}	Կեր բաժանել գիշերվա համար.
յեր. 4—առ. 5	Գիշերային հանգիստ:

Աշխատանքի որվա կարգը—սավարը նախում արածացնելու
ժամանակամիջոցում

Ճ Ա Մ Ե Ր	Արածելը յեվ հանգիստ
5 — 7	Արածացնել. յեթե ցող կա, ապա տավարն արձակել ցողը վերա- նալուց հետո.
7 — 8	Հանդատանալ արածատեղում.
8 — 11	Արածացնել.
	Շոգ որերին վերադարձնել ջրելու տեղը.
11 — 12	Նույնը զով որերին.
	Ճաշի ընդմիջում շոգ որերին.

Ճ Ա Մ Ե Ր	Արածելը յեվ հանգիստ		
9ԱՐՆԱՆԸ ՅԵՎ ԱՇՆԱՆԸ	ԱՄԱՌԸ		
12 — 1	11 — 1	Ճաշի ընդմիջում զով որերին.	
1 — 6	1 կամ 2-ից մինչև յե- րեկ. 6-ը		
	6 — 7		Արածացնել.
	7 — 9		Ջրել և հանգստացնել.
	9 — 9 ^{1/2}		Արածացնել.
	յերեկ. 9 ^{1/2}		Վերադարձնել բինեն
	մինչև առ. ժ. 4-ը		Գիշերային հանգիստ.
6 — 6 ^{1/2}			Ջրել և վերադարձնել բինեն զի- շերելու.
5 — 5 ^{1/2}			Նույնը և ուշ աշնանը.
5 ^{1/2} —5 առ.			Գիշերային հանգիստ:

Աշխատանքների որվա կարգը—սավարը ձևան նախում
պահելու ժամանակամիջոցում

Ճ Ա Մ Ե Ր	Աշխատանքների անունները յեվ հանգստի ժամերը
Առավ. 5—6	Կեր բաժանել.
6—7 ^{1/2}	Աղբ մաքրել.
7 ^{1/2} —8	Բանվորներին նախաճաշ տալ.
8—8 ^{1/2}	Ջրել.
8 ^{1/2} —11	Մատղաշներ. մաքրել, յեթե նրանք կապված են.
11—12	Սայլերով կեր բերել.
կեսոր. 12—1	Ճաշի ընդմիջում.
1—3	Սայլերով կեր բերել և աղբ մաքրել.
3—3 ^{1/2}	Ջրել.
3 ^{1/2} —4 ^{1/2}	Գիշերվա համար կեր բաժանել.
յեր. 4 ^{1/2} —5 առ.	Գիշերային հանգիստ:

Աւստրալիացիների որվա կարգը—վոչխարներին ձմռանը փարախուս պահելիս

ժ Ա Մ Ե Ր	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ
Առավոտ. 5—7	Կեր բերել. կոշտ կեր բաժանել.
7—10	Վոչխարներին կերակրել և հովիվներին նախաճաշ տալ.
10—11	Զրել.
11—12	Ուժեղ կեր տալ հատուկ նշանակված վոչխարներին, վորոնք նրանով պետք է կերակրվեն:
12—1	Բանվորների համար ճաշի ընդմիջում. վոչխարներին գննել.
1—5	Հանգստանալ:
յեր. 5—առ. 5	

Ծնելու շրջանում մայր վոչխարների մոտ գիշեր ու ցերեկ յերեք հերթապահուցյամբ հսկողութուն կատարել, ծնող վոչխարներին իրենց գառների հետ միասին առանձնացնել և ծրծելուն դեռ չվարժված գառնուկներին որական 3 անգամ կերակրել:

Աւստրալիացիների որվա կարգը—վոչխարներին արածացնելու ժամանակաւերջանում

ժ Ա Մ Ե Ր	Աւրածելը յեվ հանգիստ	
ՅԱՐՆԱՆՆ ՅԵՎ ԱՇՆԱՆԸ	ԱՄԱՌԸ	
Առ. 6—8	Առ. 4—6	Արածացնել (ցող յեղած ժամանակ սպասել, մինչև վոր ցողը վերջանա). այդ ժամանակամիջոցն սգտագործել վոչխարներին գննելու համար:

8—8 ^{1/2}	6—7	Հանգստանալ արածատեղում. հովիվները նախաճաշ են անում.
8 ^{1/2} —11	7—10	Արածացնել.
11—12	10—11	Զրել.
12—1	11—1	Ճաշի ընդմիջում (ամառը ժամը 1-ից մինչև 4-ը վոչխարներին գննել).
1—6	4—7	Արածացնել.
	7—7 ^{1/2}	Զրել.
	7 ^{1/2} —9 ^{1/2}	Արածացնել.
յեր. 6-ից մինչև առ. 6	յեր. 9 ^{2/2} -ից մինչև առ. 4	Գիշերային հանգիստ.
	6—8	Արհեստական բեղմնավորման ժամանակ եզերին ջոկել.
	9—11	Բեղմնավորում:

Աւստրալիացիների որվա կարգը խոզանոցում (ձմեռ ժամանակ)

ժ Ա Մ Ե Ր	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ
6 — 7	Սմբողջ խոզանոցը մաքրել, կեր պատրաստել, շենքն ողափոխել, չոր խոտ կամ հարդ փռել, խոզերին մաքրել, խոզերին գննել՝ հիվանդներին հայտնաբերելու նպատակով.
7 — 8	Վանդակներին կեր բաժանել.
8 — 9	Կերատաշտերը մաքրել.
9 — 12	Մեծ խոզերին զրոտանքի հանել.
12—13	Վանդակներին կեր բաժանել.
15 ^{1/2} —16	Սոզանոցների ցերեկվա աղբը մի թեթև մաքրել և խոզերի տակ փռված հարդը փոխել.
16—17	Կեր բաժանել.

Ախոռի աշխատանքի որվա կարգը—ձիյերի աշխատելու ԵՐԶԱՆՈՒՄ

17—18

Կերատաշտերը մաքրել.

Նույնը և ամառ ժամանակ

4—5

Բոլոր խոզանոցները մաքրել, կեր պատրաստել, շենքի ողը մաքրել, հատակին փոված հարող փոխել, հիվանդներին հայտնաբերելու նպատակով խոզերին դնել.

5—6

Խտացրած կերով մի թեթև կերակրել.

6—9

Նախիրը գտնվում է արածատեղում: Կերատաշտերը մաքրել.

9¹/₂—10

Ջուր տալ: Յեթե հնարավոր է, ապա պետք է խոզերին լողացնել.

10—14

Նախիրը ստվերում հանգստանում է.

14—15

Խտացրված կերով մի թեթև կերակրել.

15—19

Նախիրը գտնվում է արածատեղում.

19-ից

Նախիրը քշել խոզանոց՝ գիշերելու համար:

Աշխատանքների որվա կարգը հագաբանոցում

Ժ Ա Մ Ե Ը

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Առավոտ. 6-ին

Ճագարներին ստուգել և կերատաշտերը լվանալ.

7-ին

Մսուրները մաքրել և խոտ դնել.

8-ին

Արմատապատուղ տալ.

ցերեկ. 1-ին

Ուժեղ կեր տալ.

2-ին

Ամբողջ շենքը մաքրել և հականետել.

4-ին

Տալ տերևներ, ճյուղեր (կամ խոտ).

ցերեկ. 7-ին

Գիշերվա համար մսուրների մեջ խոտ դնել, իսկ ձագեր ունեցող և հիվանդ ձագարներին ուժեղ կեր և արմատապատուղ տալ.

Ժ Ա Մ Ե Ը		ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՀԱՆԳԻՍ
ԳԱՐՆԱՆՆ ԵՎ ԱՇՆԱՆԸ	ԱՄԱՌԸ	
5—8	4—8	Դաշտում աշխատեցնել.
8—8 ¹ / ₂	8—8 ¹ / ₂	Բանվորներին նախաճաշ տալ առանց ձիյերին արձակելու.
8 ¹ / ₂ —11	8 ¹ / ₂ —11	Աշխատեցնել.
11—12 ¹ / ₂	11—12 ¹ / ₂	Կոշտ կեր տալ.
12 ¹ / ₂ —1	12 ¹ / ₂ —1	Ջրել.
1—1 ¹ / ₂	1—2	Ուժեղ կեր տալ և լծել.
1 ¹ / ₂ —5 ¹ / ₂	2—4	Աշխատեցնել.
	4—4 ¹ / ₂	Կեսորվա ընդամիջում՝ առանց ձիյերին արձակելու.
	գիշեր	ժամանակ
5 ¹ / ₂ —7 ¹ / ₂	4 ¹ / ₂ —7	Աշխատեցնել.
7 ¹ / ₂ —8	9—9 ¹ / ₂	Ջրել.
9 ¹ / ₂ —11 ¹ / ₂	11 ¹ / ₂ —1 ¹ / ₂	Կերակրել
	2 ¹ / ₂ —4 ¹ / ₂	Կերակրել.
4 ¹ / ₂ —5	3—4	Ջրել:

Աշխատանքների որվա կարգը—բանող ձիյերի ագաս ժամանակ

5—11	4—10	Արածացնել.
11—1	10—1	Ճաշի ընդամիջում: Ջրել.
1—6	1—6	Արածացնել.
6—6 ¹ / ₂	6—6 ¹ / ₂	Ջրել.
	6 ¹ / ₂ —9 ¹ / ₂	Արածացնել.
ցերեկ. 6 ¹ / ₂	ցերեկ. 9 ¹ / ₂	
մինչև առ. 5	մինչև առ. 4	Բինեյում գիշերել (ուշ աշնանը մի թեթև կերակրել, իսկ ամառը գիշերներն արածացնել:

Գ Լ Ո Ի Խ IV

ԱԶԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԸ ԿՈՒՍՈՋՆԵՐՈՒՄ

Կոլխոզնիկը պետք է պարզի իրեն, վոր աշխատանքի վարձատրությունը կոլխոզում այն ձևով, ինչ ձևով նա կատարվում է գործարանում, կամ սովխոզում—անհնարին է, վորովհետև գործարանը կամ սովխոզը պետական ձեռնարկներ են, պետութիւնը նրանցից յեկամուտ է ստանում և կատարում է նրանց բոլոր ծախսերը, ըստ վորում նաև բանվորների աշխատանքի վարձատրութիւնը:

Այդպես չէ կոլխոզում: Կոլխոզից ստացած յեկամուտը ամբողջովին ծախսվում է նրա բարելավման, ընդարձակման, նույնպես և անդամների աշխատանքի վարձատրման վրա: Յեկամտաբեր տարիներում վարձատրութիւնը ավելի կլինի, սակավ յեկամտաբեր, կամ վնասատու տարիներին վարձատրութիւնը պակաս կլինի:

Այլ կերպ ասած՝ կոլխոզում աշխատողները չեն կարող նախորոք հույս ունենալ վորոշակի աշխատավարձ ստանալու և ստանում են աշխատանքի համար յեկամտի այն մասը, վորը ստացվում է տարբեր տարիներում: Վորքան ավելի յե տնտեսութիւն յեկամուտը, այնքան ավելի յե յեկամուտ ընկնում ամեն մի աշխատողին և վորքան բարձր է աշխատանքի արտադրականութիւնը, այսինքն վորքան պակաս աշխատողներ է պահանջվում տնտեսութիւն մեջ այս կամ այն աշխատանքը կատարելու, այնքան ավելի կարող է լինել ամեն աշխատողի յեկամուտը կոլխոզում:

Այդ պատճառով, կոլխոզնիկի սեփական շահերի տեսակետից ձեռնու յե, վորպեսզի տնտեսութիւնը վորքան հնարավոր է ավելի յեկամուտ տա. նույնպես ձեռնու յե յեվ այն, վորպեսզի աշխատանքի արտադրականութիւնը բարձրացման միջոցով կրնասվի միեկնույն աշխատանքով զբաղված մարդկանց թիվը, վորովհետև այնտեղ, վորտեղ հաջողութիւնը աշխատում է մեկը, նույն հաջողութիւնը կարող են աշխատել

յերկու հոգի, ապա ամեն մեկի աշխատավարձն անպայման յերկու անգամ պակաս կլինի և ընդհակառակը: Սակայն պետք է ասել, վոր միայն այն դեպքում բարձր արտադրողականութիւն աշխատանքի վարձատրութիւնը ավելի կլինի ցածր արտադրողականութիւն աշխատանքի վարձատրութիւնից, յերբ կտանմանվի նրա ճիշտ հաշվառում և արդարացի վարձատրութիւն:

Թե ինչպես պետք է արդարացի կերպով վարձատրել աշխատանքը, վորպեսզի աշխատողները շահագոգոված լինեն նրա արտադրողականութիւն բարձրացման մեջ, այդ մասին հենց յես խոսելու յեմ ստորև:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՁԵՎԸ

Յես չեմ կանգ առնելու աշխատանքի վարձատրութիւն այն բոլոր ձևերի վրա, վորոնք մինչև այժմ վորձվում էին կոլխոզներում և վորոնք յերեացին անկենսունակ, այլ կաշխատեմ նկարագրել այն ձևերը, վորոնք մինչև այժմ գործածվող բոլոր ձևերից ավելի բավարար յերեացին:

Պետք է ասեմ, վոր աշխատանքի վարձատրութիւն լավագույն ձևեր են հանդիսանում նաև այն ձևերը, վորոնք կապում են վարձատրութիւն չափը տնտեսութիւնից ստացվող արտադրանքի չափի հետ, կամ ավելի ճիշտ, վորոնց դեպքում աշխատանքի վարձատրութիւնը ուղղակի կախված է արտադրանքից—վորքան շատ արտադրանք, այնքան բարձր վարձատրութիւն:

Բայց այսպիսի վարձատրութիւն կոլխոզի տնտեսութիւն վոչ բոլոր ճյուղերում մինչև այժմ հաջողվում էր կիրառել: Այսպիսի վարձատրութիւն հեշտ է կիրառել անասնապահական ճյուղերում—կաթնային անասնապահութիւն, խոզաբուծութիւն, վոչխարաբուծութիւն, թռչնաբուծութիւն մեջ և այլն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԹՆԱՅԻՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կաթնային անասնապահութիւն մեջ ստացվում է կաթ և ջահել անասուն: Յեթե աշխատողների աշխատանքի վարձատ-

բուժյունը անմիջականորեն կախված համարենք ստացված կաթի և հորթերի քանակական աճումից, ապա տնտեսութունը կարող է հանգիստ լինել կաթնային անասնապահության աշխատանքների համար. աշխատանքը միանգամայն կբավարարի կոլտոզին, վորովհետև վատ աշխատանքը—վոչ ճիշտ կերակրումը, անմաքուր պահելը և այլն—անմիջականորեն ազդում են կովերի մթերքատվության և աճող ջահել անասունի առողջության վրա: Այդ դեպքում կաթն էլ քիչ կլինի, հորթերն էլ քիչ կլինեն և դանդաղ կաճեն, հետևապես և նախրի թիվը կպակասի:

Հարցը կայանում է նրանում—ի՞նչպես կատարել աշխատանքի վարձատրութունը, վոր կախված լինի ստացվող արտադրանքից: Այդ խնդիրը կարելի չէ լուծել այսպես.—

Ասենք թե տնտեսութունն ունի 100 կով, վորոնցից ամեն մեկը միջին թվով տալիս է 150 փութ կաթ: Այսպիսի նախրից կստացվի 15 հազար փութ կաթ և 84 հորթեր, վորոնցից, յեթե հանենք նրանց սատկելու միջին տոկոսը, տարվա վերջը մնում է 80 գլուխ, միջին թվով ամեն մեկը 8 փութ կենդանի քաշով, իսկ ընդամենը 640 փութ: Պայմանականորեն յեթե հաշվենք կաթի փութը 1 ուլբլի, իսկ հորթի մեկը տարվա վերջին 50 ուլբլի, նախրի ընդհանուր յեկամուտը կլինի հետևյալը, 15 հազար փ. կաթը 1 ուլբլով—15 հազար ու., կամ 82 տոկոսը, հորթերի արժեքը 3200 ուլբլի (18 տոկոս), ընդամենը 18200 ուլբլի:

Մենք գիտենք, վոր մի աշխատողը, անասունների բակի վոչ մեքենայացված սարքավորության դեպքում, լիովին կարող է խնամել 10 գլուխ կաթնատու կով, նրանց բազմացումով: Ամառը 100 կով և ամբողջ ջահել անասունը խնամելու համար բավական է ունենալ 2 հովիվ և 10 կովկթուհիներ, վորոնք զբաղված են լինում վոչ թե ամբողջ ուրը, այլ որական մոտավորապես 3 ժամ:

Վորքան ընդհանուր աշխատանք է գործադրվում տարեկան այդ նախրի վրա:

Չմեռվա ընթացքում, 6 ամսվա կամ 180 ուրվա ընթացքում 10 հոգի աշխատում են 1800 բանվորական ուր (որական

10 ժամ), ամառը 2 հովիվ, ամեն մեկը 185 ուր—370 բանվորական ուր, ամառը 10 կովկթուհիներ, ամեն մեկը 185 ուր (որական 3 ժամ)—555 բանվորական ուր. ընդամենը 2725 բանվորական ուր:

Չմեռը կովերը կթում են այն աշխատողները, վորոնք խրնամք են տանում կովերին: Չմեռը անասունների վրա գործադրվող աշխատանքային ուրը տևում է վոչ թե 10 ժամ, այլ վոչ պակաս 12 ժամից: Բայց, յես գտնում եմ, վոր գուտ աշխատանք 10 ժամից պելի չի լինում, մյուս ժամանակը գործադրվում է հանգստի համար և այլն:

Յեվ այսպես, պետք է վարձատրել աշխատավորներին 2725 բանվորական ուրվա համար: Վարձատրութունը, նայած տնտեսության կարողության, կարող է տարբեր չափի լինել սակայն պարզության համար յեսթադրենք, վոր տնտեսութունը կարող է վճարել աշխատավորներին 1 ուլբլի մեկ աշխատանքային ուրվա համար: Այդ հաշվից յեղնելով, տնտեսութունը պիտի վճարի 2725 ուլբլի: Հաշվելով, վոր հորթերի աճից տնտեսութունն ընդհանուր յեկամուտի 18 տոկոսն է ստանում և 82 տոկոսը ստանում է կաթից, ապա հորթերին խնամելու աշխատանքի համար պետք է վճարվի (2725×18) կորթ թվով 490 ու. կամ մի փութ աճի վրա հաշվելով 77 կ. հորթերի կենդանի ծանրության մի փութ աճից, իսկ աշխատավարձի մնացած գումարը (2725—490) 2235 ու. աշխատավորները պետք է ստանան կաթի հաշվին: Այդպիսով կաթի ամեն մի փթից կստացվի (2235:15000)—15 կուպ.:

Յեվ այդպես, աշխատողները ստացած և մեծացրած հորթերի կենդանի քաշի ամեն մի փթից ստանում են 77 կուպ., իսկ հանձնված կաթի փթից 15 կուպ.:

Հետևապես, յեթե 100 կով ունեցող մի գումին սպասարկում է մի բրիգադ (մատղաշներն էլ հետը), այդ դեպքում բրիգադի ամբողջ տարվա աշխատած գումարը (2725 ու.) բաժանելով որերի քանակին (համաձայն տարիֆիկացիայի), կրստանանք բրիգադի ամեն մի անդամի տարեկան վաստակը:

Որինակ՝

Ա. Ղ. Յ Ո Ւ Ս Յ Ա. Կ № 1

Բանվորների քանակը	Աւելանալի կամ պակասողների անունները	Ա Մ Ա Ռ Ը			Զ Մ Ե Ռ Ը			Ժամ
		Որ	Ժամ	Ժամ	Որ	Ժամ	Ժամ	
1	Բ ր է ք ա դ ի ր	185	3	555	180	10	1800	2355
9	Տավարապահներ (նույնք և կթողներ)	185	3	4995	180	10	16200	21195
2	Ն ա խ ր ա պ ա հ	185	10	3700	—	—	—	3700
Ընդամենը 27250 ժամ								

Ա. Ղ. Յ Ո Ւ Ս Յ Ա. Կ № 2

Բանվորների քանակը	Աւելանալի կամ պակասողների անունները	Որ	Կատեգորիա	Որովա վարչ	Դասակարգումը	Մեկ աշխատողի վաճառ	Մի ամսում	
								Մեկ աշխատողի վաճառ
1	Բ ր է ք ա դ ի ր	235,5	6	1	20 Կ.	282	60 Կ.	
9	Տավարապահներ (նույնք և կթողներ)	2119,5	4	1	—	2119	50 Կ.	
2	Նախարար	370,0	3	—	85 Կ.	322	90 Կ.	
Ընդամենը 2725 Կ.								

Ինքն ըստ ինքյան հասկանալի չէ, վոր նույն այս ձևով բոլոր բրիգադների համար հաշիվ կատարելով, կարելի չէ բրիգադում աշխատող ամեն մեկի վաստակը վորոշել:

Այդպիսով աշխատողները ձգտելով իրենց աշխատավարձն ավելացնել, անպատճառ պիտի ձգտեն նաև կովերի կթվելու ընդունակությունն ավելացնել, աճեցնել ավելի մեծ քանակությամբ սերունդ և վոր այդ սերունդը ավելի մեծ ծանրություն լինի: Ինչպե՞ս հասնել դրան: Դրան կարելի չէ հասնել

գործադրելով կովերին առողջ խնամելու և ճիշտ կերակրելու այն ձևերը, վորոնք սահմանել և գիտությունը: Հետեվաբար, անասնապահության աշխատավորները, հոգալով իրենց աշխատավարձի ավելացման մասին, անհապաղորեն մինչև բարձրագույն աստիճանը պիտի բարձրացնեն նաև այդ ճյուղի յեկամուտը: Միայն պետք է հնարավորություն տալ աշխատավորներին մաքսիմում յեռանդ հայտաբերել և չխնայել ու վճարել նրանց լրիվ աշխատավարձը ավելի մեծ քանակությամբ կաթ կամ աճ ստանալու դեպքում, չվախենալով, վոր աշխատողների ջանքերով կարող է անասունների արտադրելու ունակությունը բարձրանալ ասենք թե մինչև 180 փուլ, իսկ սերունդը կաճի վոչ թե 640 փուլ, այլ ասենք 700 փուլ: Այդպիսի դեպքում ամբողջ աշխատանքի համար հարկավոր է վճարել վոչ թե 2725 ուրբի, այլ $(18000 \times 15) + (700 \times 77) = 3239$ ուրբի ստացված արտադրանքի համաձայն:

Այդ գումարը պետք է վճարել առանց խնայելու, վորովհետև ավելցուկ արտադրանք ստանալուց տնտեսությունը բարձր աշխատավարձ վճարելու դեպքում էլ դարձյալ զգալի ոգուսներ կունենա:

Աշխատավարձի մատնանշված ձևի դեմ մի քանիսը առարկում են, վոր աշխատողների մեջ կարող է առաջ գալ իրենք իրենց աշխատանքով գերծանրաբեռնելու ձգտումը, ի հաշիվ աշխատավորների կրճատման, թե՛ այդպիսի դեպքում աշխատավորը կարող է վաստակել ավելի, յեթե նույնիսկ կաթնալին անասունի արտադրողականությունը պակասի: Այդ առարկույնների հետ համաձայնվել չի կարելի, վորովհետև վարձը կարելի չէ համարել վոչ թե բոլոր աշխատավորների վրա, այլ հաշվել յուրաքանչյուր աշխատավորի վրա առանձնապես, այսինքն՝ կարելի չէ վարձատրության բաժանումը պայմանավորել այնպես, վոր որինակ, տարվա ընթացքում աշխատել են 10 մարդ և վաստակել են 3239 ուրբի, ապա նշանակում է յուրաքանչյուրին դուրս է գալիս 323 ուրբ. 90 կոպ. և այդ հաշվից յեղնելով, կատարել ամեն մի աշխատավորի վարձատրությունը, պարտավորելով նրան հասցնել աշխատանքների քանակը պլանով նախատեսնված չափերին:

Այդպիսի պայմաններում աշխատավորների համար շահավետ չէ աշխատողների թիվը կրճատել, փորովհետև կրճատումը չպիտի ավելացնի ամեն մի առանձին աշխատողի աշխատավարձը:

Ի վերջո պետք է հիշել, Վոր անասնապահության մասնաճյուղում աշխատողների խմբից պետք է մեկին ավագ նշանակել, Վորը պատասխանատու լինի այդ ճյուղի անասունների, գույքի, կահավորանքի և կերերի համար: Նրա աշխատանքի համար նրա աշխատավարձին առանձին տարում 5 տոկոս է ավելացվում, յերկրորդ տարին 10 տոկ., յերրորդ տարին 15 տոկ. և այլն: Այս ավելացումներն ևս կնպաստեն աշխատավորների վորակի բարձրացման՝ այս կամ այն մասնաճյուղի ասպարիզում: Իսկ քանի բարձր կլինի աշխատողների վորակն, այնքան ավելի լավ կգնա գործը և ավելի արագ կբարձրանա առանձին ճյուղերի և ամբողջ տնտեսության յեկամուտը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՋԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վերցնենք բեկոնի ուղղություն ունեցող խոզաբուծությունը: Բեկոնի սերունդը աճեցվում է մինչև 7—8-ամյա: Ամեն մի մայրը յերկու անգամ ծնելով տալիս է 15—20 խոզի ձագ, վորոնցից 10 գլուխը սնեցվում են, իսկ մնացածները բրակի յեն յենթարկվում: Ընդամենը սերունդը կարելի յե 50 փութ համարել: Զարգացած խոզաբուծություն ունեցող տնտեսության մեջ համարվում է, Վոր մեկ աշխատավորը կարող է 10 մայր սպասարկել նրանց ամբողջ սերունդի հետ միասին: Հետևաբար յուրաքանչյուր աշխատող աճեցնում է 500 փութ կենդանի կշռով սերունդ: Այստեղից հեշտ է վորոշել աշխատավորի վարձը մեկ փթից: Որինակ՝ «Կոմունիստական փարոս» կոմունայում աշխատողներին նշանակված է 1 ուրբլի աշխատավարձ կենդանի խոզերի 1 փթից:

Գործնականորեն այդ այդպես է արվում. տարվա սկզբում հոտը հանձնարարում է աշխատողներին ըստ կշռի: Տարվա ընթացքում բոլոր ծախված է խոհանոց առնված խոզերը կշռվում են և վերջապես, տարվա վերջում նորից կշռվում է ամբողջ

հոտը և խոհանոց առնված, ծախված և տարվա վերջում մնացած խոզերի ու տարվա սկզբում յեղած խոզերի հոտի կշռի մեջ յեղած տարբերությունը կազմում է տարվա կենդանի կշռի ընդհանուր աճը: Աճի մեկ փթի համար 1 ուրբլի աշխատավարձ համարելով, իմ բերած որինակում աշխատավորը պիտի ստանա 500 ուրբլի, մեկ փթից 80 կոպեկ համարելով, աշխատավորը կստանա 400 ուրբլի և այլն: Սակայն մեկ փրթից աշխատավարձը անպայման պետք է վորոշել վոչ թե տարվա վերջում, այլ տարվա սկզբում, վորպեսզի հնարավորություն տրվի աշխատավորին մաքսիմալ յեռանդ, ինիցիատիվա հայտնաբերելու խոզերին ձիշտ կերակրելու, խնամելու և այլն գործում, հիշելով, Վոր նախահաշվից ավելի արտադրված ամեն մի փութը ավելացնելու յե նաև նրա աշխատավարձը և ընդհակառակը, նախահաշվից պակասած ամեն մի փութը կնշանակի նրա աշխատավարձի պակասումը:

Ինչ վերաբերվում է խոզաբուծության մեջ վորակյալ աշխատանքը խրախուսելուն, ապա այստեղ ևս, ինչպես և ուրիշ ճյուղերում, անհրաժեշտ է սահմանել ամեն տարվա 5 տոկոսային ավելացումն աշխատավորի հիմնական աշխատավարձի վրա:

Իսկ մասնաճյուղում աշխատողների քանակը պակասեցնելով, իրենց աշխատավարձը ավելացնելու ձգտումների առաջն առնելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր աշխատողի համար սահմանել նրա սպասարկելիք գլուխների քանակը (նորման), վորի փոփոխումը դեպի պակասումը վոչ մի ոգուտ չի տալիս աշխատավորին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՐԻՇ ՀՅՈՒՂԵՐՈՒՄ ՅԵՎ ԹՈՉՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աշխատանքի վարձատրությունը վոչխարաբուծության մեջ կարելի յե հեշտությամբ հաշվել և այդ կախված կլինի նաև կաթնային անասնապահության մեջ ստացված բրդի և խաշների քանակից:

Թունաբուծութեան մեջ աշխատավարձը հաշվի յե առնվում 1000 ձվից, կամ աճեցված հավերի գլխից: Կարծում եմ, վոր կաթնային տնտեսութեան և խոզաբուծութեան համար կատարված թվաբանական նման հաշիվներ կատարելը դժվար չե և ամեն մի ճյուղի համար հաշիվներ կատարել այստեղ ավելորդ եմ համարում և անցնում եմ տնտեսութեան ուրիշ ճյուղերում աշխատանքի վարձատրութեան ձևերի նկարագրութեան:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՇՏԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՍԵՋ

Դաշտաբուծութեան աշխատանքի վարձատրութեան ձևով տարբերվում է անասնաբուծութեանից նրանով, վոր դաշտաբուծութեան արտադրանքը հակառակ անասնաբուծութեան արտադրանքին, ավելի մեծ տատանումների յե յենթակա: Բերրի տարիներին արտադրանքն ավելի շատ է ստացվում, իսկ անբերրի տարիներին—ավելի քիչ: Բերրի քանակի այդպիսի անկայունութեան պայմաններում աշխատանքի վարձատրութեանն ուղղակի կախումի մեջ դնել արտադրանքից անհնարին է. բացի դրանից, դաշտաբուծութեանն էյական տարբերութեան ունի անասնաբուծական ճյուղերից նրանով ևս, վոր այդ ճյուղը, հակառակ անասնաբուծութեան աշխատավորների, մշտական շտատով չի սպասարկվում, այլ ժամանակավոր աշխատավորներով: Դաշտաբուծութեան մեջ աշխատանքը կատարվում է վոչ թե ամբողջ տարին, այլ սեզոններով: Դա ևս դաշտաբուծութեանն առանձին դրութեան մեջ է դնում: Դաշտաբուծութեան մեջ աշխատանքները կատարում են այն աշխատավորները, վորոնք ձմեռն աշխատում են կամ արհեստանոցներում, կամ տնային տնտեսութեան մեջ (կանայք), կամ ընդհանուր-տնտեսական և այլ աշխատանքների վրա:

Դաշտաբուծութեան աշխատավորները ամառվա ընթացքում ևս իրենց ամբողջ ժամանակը միահավասար չափով դաշտաբուծութեան մեջ չեն ոգտագործում. յերբեմն նրանք լիակատար ծանրաբեռնված են լինում, իսկ յեթե լիակատար չեն ծանրաբեռնվում, ապա անհրաժեշտ է լինում տեղափոխել նր-

րանց ուրիշ ճյուղեր, ինչպես որինակ՝ այգեգործութեան, խաղողագործութեան, բանջարաբուծութեան և այլն մեջ: Այդ բոլոր հանգամանքները արգելում են դաշտաբուծութեան աշխատավորների աշխատավարձը կառուցել այնպիսի սխտեմով, ինչպիսին է անասնաբուծական ճյուղերում: Դաշտաբուծութեան մեջ աշխատավարձի ուրիշ սխտեմ պետք է լինի: Յեվ զանազան կոլխոզների մինչև այժմ գործադրած բոլոր ձևերից վարձատրութեան ամենաբարձր ձևը պետք է համարել աշխատանքի վարձատրութեան գործարկային ձևը դաշտաբուծութեան մեջ:

Գործարքային աշխատավարձը այնքան կատարյալ չէ, վորքան աշխատավարձի վերև նկարագրված սխտեմները անասնաբուծութեան ճյուղերի մեջ, վորովհետև գործարքային վարձատրութեանն աշխատանքի վորակի բարձրացման խթան չի տալիս. կարելի յե շատ աշխատանք կատարել, բայց կատարել անփուլթ, հապճեպ կերպով: Տնտեսութեան համար աշխատանքի այդպիսի կատարումը ցանկալի չէ և վնասակար է: Դրանում է աշխատանքի գործարքային վարձատրութեան պակասութեանը: Սխտեմի այդ պակասութեանն ուղղել հնարավոր է, ըստ յերևույթին, միայն աշխատանքի կատարման խիստ ստուգում մտցնելով: Պատասխանատվութեան վախով կատարվող աշխատանքը փոխարինել աշխատավորների ինիցիատիվով, ինչպես դա տեղի ուներ անասնապահական ճյուղերում, իհարկե, անհնարին է և քանի դեռ հնարավորութեան չկա աշխատավարձի ուրիշ ձևեր առաջարկելու դաշտաբուծութեան մեջ, ստիպված ենք կանգ առնել գործարքային վարձատրութեան վրա:

Ինչպես կազմակերպել գործարքային վարձատրութեանը:

Նրա ճիշտ կազմակերպման համար նախ և առաջ անհրաժեշտ է աշխատանքի ճիշտ հաշվառքը: Դաշտաբուծութեան բոլոր աշխատանքները պետք է վնահատվեն ըստ նրանց դժվարութեան, նրանց կատարման համար անհրաժեշտ ժամանակի, առողջութեան վրա ունեցած ազդեցութեան և այլն: Այս բոլոր պայմաններից կախյալ բոլոր աշխատանքները բաժանվում են վորոշ կարգերի (տես յերես 61—77): Բոլոր կոլխոզների հա-

մար ընդունելի բաժանում տալ անկարելի յե, վորովհետև աշխատանքների բնույթը շատ առանձնահատկություններից ե կախված՝ կլիմայից, հողից, մեքենայացման աստիճանից, ինվենտարի կարգին լինելուց և այլն: Սակայն, կարծում ենք, վոր հիմք չկա կատեգորիաների նոր քանակների ստեղծագործման ձգտելու և պետք ե ընդունել վորպես բոլոր աշխատանքները 5 կամ 7 կարգի կատեգորիաների բաժանումը, ինչպես այդ գործադրվում ե մի շարք կոլխոզներում ներկայումս:

Չանազան կատեգորիաների բաժանված աշխատանքների վարձատրության տարբերությունը պետք ե սահմանել հետևյալ փոխհարաբերությամբ*):—

Առաջին կատեգորիայի աշխատանքները գնահատելիս վորոշել 1 ուլբի, յերկրորդ կատեգորիայի աշխատանքները— 1 ո. 25 կոպեկ, 3-րդ կատեգորիա— 1 ո. 50 կոպ., 4-րդ— 1 ո. 75 կոպ. 5-րդ— 2 ուլբի, 6-րդ— 2 ո. 50 կ., 7-րդ— 3 ո:

Պետք ե, սակայն, ավելացնել, վոր ասենք թե 2-րդ կատեգորիայի աշխատանքներ կատարողը անպայման չպիտի ստանա 1 ուլբի 25 կոպեկ, ինչպես ասված ե մեր բերած որինակում:

Հիշված վարձատրությունը նա կստանա միայն այն դեպքում, յեթե այդ տեսակ աշխատանքի վերաբերմամբ, մի որվա ընթացքում տա սահմանված որեկան նորմայի 100 տոկոսը: Բացի դրանից, շահագրգռման նպատակով պետք ե սահմանել հետևյալը.— յեթե աշխատողը կատարեց իր որական աշխատանքային նորման 110 տոկոսով, նա պետք ե ստանա 2-րդ կարգի որավարձը 115 տոկոսով, Ընդհակառակը, յեթե նա իր որական աշխատանքային նորման կատարեց 90 տոկոսով, կըստանա որավարձ 85 տոկոսով (2-րդ կարգի որավարձի հաշվով):

*) Պետք ե ավելացնել, վոր կատեգորիաների հատուկ փոխհարաբերությունը առանձին կոլխոզներում կարող ե լինել և ուրիշ:

Բայց, վորպեսզի ամեն մի աշխատողի համար ամեն անգամ, ամեն որ հաշիվներ չանել, պետք ե խմբական կամ բրիգադային սղելչինայի կարգ մտցնել մինչև մի վորևե աշխատանքի վերջանալը: Այստեղ իհարկե պետք ե հաշվի առնել, թե առաջադրված ամբողջ աշխատանքը կատարելու համար վոր կատեգորիաներով և ինչքան աշխատանքային որեր են պահանջվում:

Խմբական (բրիգադա) սղելի աշխատանքի դեպքում խմբակն իր դեկավարի միջոցով ամեն մի առաջադրությունն ըստանում ե բրիգադիից և հենց սրան ել, կամ թե ամբողջ բրիգադից աշխատանքն ընդունող հատուկ մարդուն— հանձնում ե կատարված աշխատանքը:

Վերջացնելով դաշտավարության մեջ աշխատանքը վարձատրելու յեղանակների նկարագրությունը, անհրաժեշտ եմ համարում մի քիչ ել կանգ առնել կալսի ժամանակ աշխատողների վարձատրության վրա: Ամենից լավ ե այդ աշխատանքը վարձատրել կալսելուց ստացված հացահատիկի ամեն մի փթից: Այստեղ պիտի ասել, վոր զանազան ուլթի և զանազան արտադրողականության կալսիչների աշխատանքի հաշիվը միատեսակ չե, բայց դժվար ել չե հաշիվ անել, թե մեկ փթից հաշվելով, ինչքան վարձատրություն պիտի տալ, յեթե իհարկե գիտես կալսիչ մեքենայի արտադրողականությունը, եդ մեքենայի վրա աշխատողների թիվը և տնտեսության մեջ գոյություն ունեցած աշխատանքի վարձատրության միջին չափը: Ահա մի ուրինակ «Կոմունիստական Փարոս» կոմունայից.— Եստեղ 6 ուլթանոց կալսիչի վրա աշխատողները ստանում են 6 կոպեկ (կալսելուց ստացված հացահատիկի մի փթից, կալսիչն որական տալիս ե 1000 փութ հացահատիկ ու նրա վրա աշխատում են 30 չափահաս և 10 անչափահաս աշխատողներ:

10 ԺԱՄՅԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐՎԱ ԱՐՏԱԿՐԱՆՔԻ ՄՈՏԱՎՈՐ ՆՈՐՄԱՆԵՐԸ*
(ԶՀԱՇՎԱԾ ԿՐՅԸ)

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի տեսակը	1 բանվարտադրանք	Աւելացմանի բնույթը	Կարգը (բայր.)	Ծանոթություն
1. Զիյերին խնամելը	Ամեն մի արտադրանքի համար 80—100 միավոր	Ավագ ձիապահը հսկում է ձիապահների վրա, պատասխանատու յե ձիյերի համար, ձիապահներին կերի նորմաներ ե տալիս և հսկում է մատյաններին՝ ծնելու ժամանակ:	4	
ա) Բանող ձիյերին	10—15	Զիապահները խնամում, կերակրում, ջրում և մաքրում են բանող ձիյերին. նրանք մաքրում են նաև շենքը:	2—3	
բ) Ազնվացեղ ձիյերին	Յուրաքանչյուրի կամ մոտավորապես 40—60 միավոր համար մի ավագ	Ավագ ձիապահը կատարում է նույնը, ինչ վոր բանող ձիյերի ավագ ձիապահը. բացի դրանից, նա ձիյերին վարժեցնում ու զուգավորում է և մատյաններին ծնելիս հսկում է: Փորձառու պետք է լինի:	5	

*) Այս նորմաները վորոշ փոփոխությամբ վերցված են «Организация, учет и оплата труда в животноводческих колхозах» գրքից, Ա. Ս. Բուսիգինի խմբագրությամբ, 1930 թիվ:

Աշխատանքի տեսակը	1 բանվարտադրանք	Աւելացմանի բնույթը	Կարգը (բայր.)	Ծանոթություն
	10—12	Զիապահները կատարում են նույնը, ինչ վոր բանող ձիյերի ձիապահները. բացի դրանից, ձիյերին վարժեցնում և զուգավորում են: Ազնվացեղ ձիյերին խնամելու գործում նրանք փորձառու լինելու պետք է ունենան:		Ամեն մի ձիուն առանձին բաժանմունքում պահելիս մաքրու նորման պակասում է մինչև 8 ձի:
գ) Զիյերին (յերամակով)	60—80	Զիարածը գիշեր ու ցերեկ արածացնում է ձիյերին, պատասխանատու յե յերամակը գողերից և զազաններից պաշտպանելու գործում:	4	
II. Խոտոյեղջուրավոր անասունների խնամելը				
ա) Յեզնեերին խնամելը	20	Յեզապահը խնամում է յեզներին, նրանց կերակրում ու ջրում և մաքրում է շենքը: Պետք է ծանոթ լինի լծասարքի հետ:	3	Ազնվացեղ ցուլերին խնամելիս արտադրանքի նորման իջեցվում է 10-ը գլխի:

Աշխատանքի տեսակը	1 բանվարտագրանք	Ավելացման քանակը	Կարգը (թիվ)	Ծանոթություն
բ) Կովերին խնամելը	Ամեն մի գոմի կամ մոտ 150—180 կովի համար մի ավագ	Ավագ տավարապահը հսկում է յեղապահները վրա, հետևում է կովերի զուգավորմանն և ծնելուն, կերը տալիս է տավարապահներին:	4	Յեթե 1 տավարապահին ընկնում է 40 կովից պակաս, այն ժամանակ նա մասնակցում է մյուս տավարապահների աշխատանքներին:
	20—25	Տավարապահը (կին կամ տղամարդ) անասուններին խնամում, կերակրում և մաքրում է, աղբը հավաքում և դուրս է տանում. նա մաքուր պետք է պահի շենքը և կովերին:	2—3	
գ) Մատղաշներին խնամելը	30—35	Տավարապահները տավարին խնամում, կերակրում և ջրում են, տավարին և շենքը մաքրում են:	2—3	Շաքարի և ոգու գործարաններին կից պահելիս արտադրանքի նորման իջնում է մինչև 20 գլխի:
դ) Տավարին գերացնելը	25	Կերակրում, խնամում և մաքրում է:	2—3	
ե) Կովերին կթելը	60—75	Ավագ կթողը (կին) դեկավարում է կթելու գործը՝ իր անձնական մասնակցությամբ, հետևում է, կովերը կանոնավոր կթվեն, կաթն ամանների մեջ լեցվի և բաժանվի:	4	Ամեն մի կլթողի արտադրանքի որական նորման հավասար պետք է լինի 100—120 լիտրը կաթի:
	8—12	Կթողը (կին) կովերին կթում է, կուրծերը մասսաժ է անում, ամանները լվանում և հորթերին դույլով ջրում է:	3	

Աշխատանքի տեսակը	1 բանվարտագրանք	Ավելացման քանակը	Կարգը (թիվ)	Ծանոթություն
ը) Խոշոր անասունների խնամապահությունը	1. Անտառում վայրերում	50		Նախրապանն արածացնում է նախիրը և պատասխանատու չէ տավարի ամբողջության համար: Նա խնամելու և կերակրելու փորձառություն պետք է ունենա:
	2. Դաշտային վայրերում	75		Նախրապանի ոգնականն ինքըն առանձին արածացնում է 30—40 գլուխ հորթերին:
			3	Անտառում վայրերում 50—100 գլխի համար պետք է մի նախրապան և մի ոգնական, իսկ 100—150 գլուխի համար՝ 1 նախրապան և 2 ոգնական:
			1	150-ից ավելի լինելու դեպքում նախրապանների և ոգնականների թիվը ավելացվում է համապատասխան չափով: Դաշտերում և մարզագետիններում 75—150 գլխին—1 նախրապան և 1 ոգնական, 150—300 գլխին՝ 1 նախրապան, 2 ոգնական: 300-ից ավելի լինելու դեպքում նախրապանների և ոգնականների քանակն ավելացվում է համապատասխան չափով:

Աշխատանքի տեսակը	1 բանվարտադրանք	Աւելացանքի բնույթը	Կարգը (բաժր.)	Ծանոթութիւն
III. Խոզերին խնամելը				
Մայր խոզը, վորձը և ձագերը	Ամեն մի խոզանոցին 1 ավագ կամ 1 ավագ 40—50 վանդակի համար	Ավագ խոզապահը ղեկավարում է խոզերին խնամելու գործը և հսկում է խոզապահների աշխատանքների վրա: Նա պատասխանատու յե խոզանոցի պահպանութեան համար: Կերը խոզապահներին է տալիս, հսկում է ծնող խոզերի վրա:	4	
Մայր խոզը, վորձը, ձագերը	10 վանդ.	Խոզապահները խնամում են խոզերին և ձագերին, կեր են պատրաստում, շենքը մաքրում և խոզերին լողացնում:	3	10 վանդակում վոչ ավելի, քան 100—80 գլուխ 2—5 6 ամսակա մանուկներ: 10 վանդակում վոչ ավելի, քան 80—60 գլուխ 5-8 ամսական խոզեր:
Խոզերին արածացնելը	50 գլ.			50—100 գլխի համար 2 խոզարած, իսկ 100-ից վեր յուրաքանչյուր 50 գլխի համար ավելացնել 1 խոզարած:

Աշխատանքի տեսակը	1 բանվարտադրանք	Աւելացանքի բնույթը	Կարգը (բաժր.)	Ծանոթութիւն
IV. Վոչ խոզերին խնամելը				
ա) Վոչ խոզերին արածացնելը	Յուրաքանչյուր հոտին կամ մ տարրապես 1000—1500 վոչ խոզին 1 ավագ հովիտ	Ավագ հովիտն արածացնում է վոչ խոզերին, ղուգավորում և հետևում է նրանց ծննդյան: Կովում է վոչ խոզերի վրա ապրող միջատների և կաշվի հիվանդութեաններին դեմ: Անասուններին նախնական ոգնութեան հասցնելու համար պետք է ծանոթ լինի անասնաբուժական փորձնական գիտելիքներին:	4	Առանց գառների 1000—1200 վոչ խոզին՝ 1 հովիտ, 1 ոգնական և 1 շուն: Գառներով 1000 վոչ խոզին՝ 5 հովիտ, 2 ոգնական և շներ: Անասուններին քանակը 500-ից ցած լինելու դեպքում սպասարկողների թիվը չի կարելի պակասեցնել համապատասխան չափով:
բ) Վոչ խոզերին ձմռան խնամելը	200—250	Վոչ խոզապահը խնամում է վոչ խոզերին, պատասխանատու յե նրանց ամբողջութեան համար: Նա պետք է գիտենա ղեկավարել և հետևել ծնելուն:	2—3	
	300—400	Ոգնականները:	2—3	
գ) Վոչ խոզերին կթելը	100—150	Նույնը, ինչ վոր վոչ խոզապահի համար:	2	

Աշխատանքի տեսակը	1 բանվարտադրանք	Ա.ժխտասանքի բնույթը	Կարգը (բաթ.)	Ծանոթություն
զ) Վոչխարներին լողացնելը	40—50		1—2	
յե) Վոչխարներին խուզելը		Սուզողը վոչխարներին խուզում է: Անասունների և զործիքների հետ վարվելու համար նա պետք է ունենա շնորք և փորձառություն:	3	Նայած թե ինչ ժամանակ է խուզվում:
Կոշաբրդանի	15—20			
Կիսակոշաբրդանի	12—18			
Մերինոսի բրդանի	10—16			
V. ձագարների խնամելը	100—120 վանդ.	ձագարապահը խնամում և կերակրում է ձագարներին, մաքրում է շենքը, հսկում է մայր ձագարների և ձագերի վրա և առանձնացնում է հիվանդներին:	3	Կարելի չէ 50—100 վոլյեր՝ նայած վանդակների սիստեմին և դասավորությունը:
VI. Թռչունների խնամելը	Ամեն ինչ թռչունների համար 1 սովազ թռչնատան	Ավագ թռչնապահը ղեկավարում է թռչնանոցի աշխատանքները՝ իր անձնական մասնակցությամբ: Նա սպաստասխանատու չէ ամբողջ թռչնանոցի համար:	4	

Աշխատանքի տեսակը	1 բանվարտադրանք	Ա.ժխտասանքի բնույթը	Կարգը (բաթ.)	Ծանոթություն
Սոռոր թռչուն	600—700	Թռչնապահը խնամում է թռչուններին և մաքրում է շենքը:	2—3	Բաղեր, սագեր, հնդկահավեր, հավեր
Միջակ թռչուն	700—800	Կերակրում է թռչուններին, մաքրում է շենքը:	2—3	
Թուխսեր	200—250	Հսկում է բների վրա:	1—3	

ԱՂԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՄՈՏԱՎՈՐ ԲԱԺԱՆՈՒՄԸ՝ ԸՍՏ ԱՂԽԱՏԱՎԱՐՉԻ ԿԱՐԳԵՐԻ

№№	Արհեստների անունը	Ա.ժխտասանքների բնույթը	Կարգը (բաթ.)
1	Ձիապահը	<p>ա) Յերք ձիերը ցեղի համար են</p> <p>Ավագ ձիապահը վերահսկում է ձիապահների գործունեությունը վրա, պատասխանատու չէ ձիերի համար, հետևում է վարժեցնելուն, զուգավորելուն և ծնելուն: Յեղային ձիերին խնամելու գործում նա փորձ փորձառություն պետք է ունենա:</p> <p>Կրտսեր ձիապահը խնամում է ագնվացեղ ձիերին, այսինքն նրանց կերակրում, ջրում, մաքրում, վարժեցնում և զուգավորում է. բացի դրանից, նա պետք է աստուր մաքրի: Նա փորձառու պետք է լինի</p>	5

կերակրելու, խնամելու և զուգավորելու գործում:

3

բ) Յերբ ձիւեր բանող են

Ավագ ձիւապահը վերահսկողութեան է յենթարկում կրտսեր ձիւապահների գործունեությունը, պատասխանատու յէ ձիւերի պահպանութեան համար: Նա խոշոր սնտեսուկություններում աշխատելուց վորոշ փորձառութիւն ձեռք բերած պետք է լինի: Պատասխանատու յէ ձիւասարքի պահպանութեան և ամբողջութեան համար:

4

Կրտսեր ձիւապահը խնամում է բանող ձիւերին, ախինքն կերակրում, ջրում և մաքրում է. ախոռը, կարգի յէ բերում:

3

2 Զիւրածը

Զիւերին գիշեր ու ցերեկ արածացնում և յերամակը գողերից և գազաններից պաշտպանում է:

3

3 Յեզապահը

Յեզային յեզների ավագ յեզապահը ընդհանուր ծանոթութիւն ունի կերաբաժիններ կազմելու գործում: Տարրական գիտելիքներ ունի անասուններին բժշկելու և գժբախտ պատահարների դեպքում նրանց նախնական ոգնութիւն հասցնելու համար: Գիտէ անասունների վտաններն և բաշը խնամելը: Գիտէ լծի կազմութիւնը և նրան խնամելը: Ղեկավարում է կրտսեր յեզապահների աշխատանքները՝ անասուններին կերակրելու և խնամելու, ինչպէս նաև աղբը դուրս տանելու և կանոնավոր տեղավորելու գործում:

3

Բանող յեզների ավագ յեզապահը կատարում է նույնը՝ ինչ վոր ցեղային յեզների ավագ յեզապահը:

3

Կրտսեր յեզապահը փորձառութիւն պետք է ունենա անասուններին կերակրելու և խնամելու գործում: Պիտի գիտենա անասունների հետ վարվելը, նրանց վտաններն ու բաշը խնամելը և ծանոթ լինի լծի կազմութեանը: Պատրաստում ու բաժանում է կերը և ջրում է անասուններին: Մաքրում է յեզներին, մաքրում է նաև ջրի ձամբան և դուրս է տանում աղբը: Պահպանում է յեզանոցի կարգն ու կանոնը:

2

4 Տավարապահը

Ավագ տավարապահը պետք է գիտենա տավարի տեսակները, նրանց կանոնավոր խնամելն ու կերակրելը, զուգավորելն և նախնական բժշկական ոգնութիւն հասցնելը: Պետք է իմանա վորոշել զուգավորելու և ծնելու ժամանակը, կերի նորմաներ կազմելն և ձագերին մեծացնելը: Ղեկավարում է անասուններին խնամելու աշխատանքը և հետևում է, վոր անասնապահութեան ասպարիզում աշխատողները իրենց պարտականութիւնները կատարեն: Հետևում է ախոռի ընդհանուր դրութեանը: Անասունների համար պահանջվող կերի պլան է կազմում:

4

Կրտսեր տավարապահները (կին և տղամարդ) փորձնական գիտելիքներ պետք է ունենան անասուններին խնամելու, զուգավորելու և նախնական բժշկական ոգնու-

թյուն հասցնելու գործում: Նրանց պարտա-
կանությունն է նաև կեր մատակարարելը,
անասուններին կերակրելը, այդ հավաքելն
ու դուրս տանելը և գոմը մաքուր պահելը:

3

5 կթողները

Ավագ կթողը (կին կամ տղամարդ) ղե-
կավարում է կովերի կթելու գործը՝ ինքն
անձամբ մասնակցելով այդ աշխատանքին:
Հետևում է կանոնավոր կթելուն և կթելու
ժամանակ առողջապահական բոլոր պայ-
մանները կատարելուն: Նշանակում է կթե-
լու կարգն ու հերթը:

4

Կրտսեր կթողները (կին կամ տղամարդ)
կթում են, կուրծերը մասսաժ են անում և
ամանները լվանում: Նրանք պետք է գիտե-
նան անասունների հետ լավ վարվելու և
հորթերին կաթ տալու յեղանակը:

3

6 կաթնա-
պահը

Պետք է իմանա կաթ վերամշակող մե-
քենաների հետ վարվելը, սերգատների քան-
դելն ու սարքելը և կաթնամթերքներ պա-
հելու կանոնները: Նա պատասխանատու յե
ամանների և գործիքների մաքրության
համար:

3

գ) Յեղային սնեստուբյան մեջ

7 Խոզապա-
հը

Ավագ խոզապահը խնամում է ցեղային
խոզերին և ձագերին (ցեղային տնտեսու-
թյան մեջ): Պատասխանատու յե խոզանո-
ցի պահպանության համար և հետևում է
խոզերի ծնելուն:

4

Խոզապահը խնամում և կերակրում է խո-
զերին և ձագերին, կեր է պատրաստում և
շենքն է մաքրում: Մասնագետի ցուցմունք-
ներով լողացնում և կշռում է խոզերին:

3

8 վոչխա-
րապահը

Խնամում և կերակրում է վոչխարներին
և պատասխանատու յե նրանց ամբողջու-
թյան համար: Անհրաժեշտ փորձառություն
պետք է ունենա անասուններին զուգավո-
րելու և ծնելուն հետևելու գործում:

- ա) Ավագը 4
- բ) Կրտսերը 3

9 Ուղտա-
պահը

Խնամում և հսկում է ուղտերին, ծանոթ
պետք է լինի ուղտերի բնավորությանն ու
սովորություններին:

3

10 Խուզողը

Խուզում է վոչխարներին և ուղտերին:
Շնորք և վարժություն պետք է ունենա՝
անասունների և գործիքների հետ վարվելու
գործում:

3

11 Նախրա-
պանը

Արածացնում է տավարին և նրան կըշ-
տացնելու և վողջ պահելու պատասխանա-
տվությունը վերցնում է իր վրա: Խնամե-
լու և կերակրելու փորձառություն պետք է
ունենա, ծանոթ պետք է լինի անասուն-
ներին նախնական բժշկական ոգնություն
հասցնելու գործին:

3

12 Նախրա-
պանի ոգ-
նականը

Մենակ արածացնում է խոզերին և հոր-
թերին:

2

- 13 Ճագարա-
պահը խնամում ու կերակրում է ճագարներին
և մաքրում է շենքը: Հետևում է, վոր մայ-
րը ճագերին կերակրի: Առանձացնում է հի-
վանդներին: 3
- 14 Շուն
պահողը խնամում և կերակրում է շներին. շնա-
բույնը և շներին մաքուր պետք է պահի և
հետևի, վոր լակոտները կանոնավոր մե-
ծանան: 3
- 15 Թռչնա-
պահը ա) Ավազը ղեկավարում է թռչնանոցի
աշխատանքները՝ ինքն անձամբ մասնակցե-
լով այդ աշխատանքներին: 4
- բ) Կրտսերը խնամում և կերակրում է
թռչուններին, մաքրում է շենքը, հավա-
քում է ձվերը և հետևում է բներին: 2—3
- 16 Հովիվ-
վոչխա-
րապահը (ցեղային
վոչխար-
ների հա-
մար) Վոչխարներին արածացնում և զուգավո-
րում է: Կուվում է վոչխարների վրա ապ-
րող միջատների (տեղական ճանձի թրթու-
րը) և կաշվի հիվանդությունների դեմ:
Գործնական անասնաբուժական գիտելիքներ
պետք է ունենա՝ անասուններին նախնա-
կան ոգնություն ցույց տալու և նրանց վրա
հսկելու համար:
ա) Հովվի ոգնականը 5
3
- 17 Պահապա-
նը Իրսից պահպանում է փակ շենքերը, շտե-
մարանները և պահեստները. պատասխանա-
տու յե կնիքների և կողպեքների անվնա-
սության համար: Պահպանում է այգիները,
զաշտերում գտնվող ղեզերն ու անշունչ ին-
վենտարը, ինչպես նաև ցանքսերն ու արո-
տավայրերը: 1

- 18 Պահես-
տապետը Հավ գրագետ պետք է լինի և գիտենա
հաշիվ պահել: Գործնականում ծանոթ պետք
է լինի գյուղատնտեսական զանազան մե-
քենաներին, նրանց մասերին և այլն: Պետք
է գիտենա մեքենաներ և այլ առարկաներ
պահելու ձևերը: Ընդունում և բաց է թող-
նում զանազան նյութեր, ընդունում է նոր
ինվենտար, պահում է այն և տալիս է մի-
այն աշխատանքի ժամանակ: Առանձնաց-
նում է ռեմոնտի կարիք զգացող մեքենա-
ները: Պատասխանատու յե նյութերի և մե-
քենաների ամբողջության ու անվնաս լի-
նելու համար: 4
- 19 Կշտողը Հավ գրագետ պետք է լինի և փորձառու-
թյուն ունենա կշռելու մեջ: Պարտավոր է
գիտենալ կշռի մետրիքական չափերը: Կըշ-
ռում է բերքը՝ հավաքելու և հանձնելու
ժամանակ: Պատասխանատու յե կշռքի ու-
ղիղ լինելու և ապրանքների ընդունելու-
թյան ու առաքման ժամանակ կշռելու աշ-
խատանքները լավ և կանոնավոր կազմա-
կերպելու խնդրում: Ամեն ինչ գրի պիտի
առնի և հաշիվ պահի: 4
- 20 Ֆուրա-
ժիբը Հավ գրագետ պետք է լինի: Մատակա-
րարում և դասավորում է ֆուրաժը: Պա-
տասխանատու յե ֆուրաժի ամբողջության
համար: 3
- 21 Մաքրողը Մաքրողի պարտականությունն է՝ շենքե-
(կին կամ տղամ.) ըր մաքրել ու կարգին պահել և հատակնե-
րը լվանալ: 2

22 Ծանր աշխատանք կատարող բանվոր

կատարում է ավելի մեծ չափով ֆիզիքական ուժ պահանջող աշխատանքներ, քանդում է հողը, ապրանքները բառնում ու դատարկում է, վառելու համար փայտ է պատրաստում, աղտեղությունները մաքրում և ձեռքով արհեստական պարարտանյութեր է ցրում:

3

23 Թեթեւ աշխատանք կատարող բանվոր

Դաշտում, այգում, բանջարանոցում, բակում և այլ տեղերում կատարում է ֆիզիքական մեծ ուժ չպահանջող աշխատանքներ, քաղհանը, խոտ դիզելը, ջվախներ լցնելը, բ) ձիաքաշ փոցխով աշխատելը, բակ մաքրելը, յեզներ կամ ձիեր քշելը, շենքեր մաքրելն ու հատակներ լվանալը:

1

24 Զանազան աշխատանքների ավագ բանվորը

Պետք է կարողանա կատարել հանձնարարված աշխատանքները: Ինքն ևս անձամբ մասնակցում է աշխատանքներին: Ղեկավարում է բանվորների մի վորոշ խումբ՝ աշխատանքը լավ կատարելու որինակ ցույց տալով նրանց: Պատասխանատու յե գյուղատնտեսական ինվենտարը կանոնավոր ոգտագործելու և աշխատանքի վորակի համար:

4

25 Ավագ տրակտորիստը

Պետք է պարզ և բազմակողմանի գաղափար ունենա հողի մշակման զանազան ձևերի, տարբեր տրակտորների և նրանց կրցվող գործիքների ու գյուղատնտեսական մեքենաների կազմության, նմանապես և նրանց կանոնավոր ոգտագործելու մասին: Պետք է գիտենա տրակտոր քանդելը, կրկին հավաքելն ու հիմնական նորոգում կատարելը: Նա հրահանգներ է տալիս կրտսեր տրակտորիստներին և տրակտորին կցվող

գործիքների վրա աշխատող բանվորներին՝ գյուղատնտ. գործիքների հետ լավ վարվելու և նրանց ամենալավ կերպով ոգտագործելու մասին: Կազմակերպում և ղեկավարում է բոլոր աշխատանքները:

7

26 Ավագ տրակտորիստը

ա) 1-ին կարգի: Պետք է գիտենա բոլոր, նմանապես և ծանր տրակտորների կազմությունը, ծանոթ լինի գյուղատնտ. գործիքներին ու մեքենաներին և հող մշակելու զանազան ձևերին: Աշխատում է «Гусеничный» կոշվող տրակտորով: Ծախսվող վառելանյութի և յուղի համար հաշիվ է պահում, գրի առնելով նաև տրակտորի աշխատանքը: Հարկ յեղած գեպքում քանդում է տրակտորը, մաքրում, հավաքում և հիմնական նորոգում կատարում: Պատասխանատու յե տրակտորի նորմալ աշխատելու համար:

6

բ) 2-րդ կարգի: Ծանոթ թպետք է լինի հող մշակելու զանազան ձևերին: Պետք է գիտենա իր տրակտորի և գյուղատնտ. պարզ մեքենաների կազմությունը: Աշխատում է տրակտորով և ծախսվող վառելանյութի ու յուղի, նմանապես և տրակտորի աշխատանքի համար հաշիվ է պահում: Ավելի վորակյալ բանվորների հսկողությամբ քանդում է տրակտորը, մաքրում, հավաքում և ընթացիկ ռեմոնտ է կատարում:

6

27 Տրակտորին կցվող մեքենաների վրա

Լավ ծանոթ պետք է լինի մեքենաներին և գիտենա նրանց լավագույն կերպով ոգտագործելու ձևերը: Պետք է գիտենա այդ մեքենաներով աշխատել, նրանց քանդել ու

	<p>աշխատող բանվորը հավաքել, փչացած մասերը փոխել և աշխատանքի ժամանակ մեքենաները կարգի գցել: Խնամում և յուղ ե քսում աշխատանքի ժամանակ:</p>	4
28 Հավաքողները	<p>Աշխատում են հնձող մեքենաներով: Կատարում են ծանր և կամ վորոշ շնորք պահանջող ձեռքի աշխատանքներ, ինչպես որինակ, հնձող մեքենայից հունձը մի կողմ գցելը, դեզ հավաքելը, խուրձերը կալսող մեքենային տալը, գտող և տեսակների բաժանող մեքենաներով աշխատելը, կտավատի լվանալը, սանդերքելն և այլն:</p>	4
29 Վարողը	<p>Պետք է գիտենա զանազան տեսակի հողերի մշակումը և բույսերին խնամելը: Ծանոթ պիտի լինի հող մշակող բոլոր մեքենաներին: Սարքի յե գցում և ղեկավարում ե տարբեր գութաններ, զսպանակային և ավսեյավոր տափաններ և այլն: Ույժ և փորձառութիւն պետք է ունենա և գիտենա բանող անասունների հետ վարվելը:</p>	5
30 Կալսող մեքենայի մոտ աշխատող ավագ բանվորը	<p>Ծանոթ պետք է լինի կալսող մեքենային և կալսելու գործին: Նա ղեկավարում ե գործը աշխատանքի ժամանակ: Պատասխանատու յե կալսող մեքենայի վորակի և արտադրողականութիւն համար:</p>	5
31 Կալսող մեք. մոտ աշխ. բանվորները	<p>Ընդհանուր ծանոթութիւն պետք է ունենան կալսող մեքենայի կազմութիւն մասին: Խուրձերը լեցնում ե ելեվատորի կամ թմբուկի մեջ:</p>	4

32 Վուռգողը	<p>Ինքնուրույն կատարում ե վուռգման աշխատանքները՝ ղեկավարելով բանվորներին: Հսկում ե դաշտերի վուռգման և վուռգող կառուցվածքների ամբողջութիւն վրա:</p>	2
33 Այգեպան բանջարապանը	<p>Այգեգործութիւնն ու բանջարաբուծութիւնը պետք է գիտենա այնքան, վորքան հարկավոր ե կոլխոզին: Պետք է գիտենա բանջարեղենի և անտառի անկարաններ կազմակերպելն ու ղեկավարելը, նմանապես և շիթիլ բուսեցնելը: Պիտի իմանա կովել այգու և բանջարանոցի վնասատուների դեմ: Ինքն անձամբ պետք է կատարի այգու և անկարանի աշխատանքները:</p>	4-5
34 Խոտ մամլողը	<p>Աշխատում ե խոտ մամլող պրեսով, վորին պետք է ծանոթ լինի: Պրեսի համար խոտ ե պատրաստում:</p>	3
35 Ջրաղացպանը	<p>Հատիկների վորակի համաձայն, պետք է գիտենա աղացքի տեսակները: Հասկացողութիւն պիտի ունենա չարխերի ատամների և արհեստական ու բնական ջրաղացքարերի մասին: Կառավարում ե ջրաղացի աշխատանքները: Հետևում ե, վոր ջրաղացի սարքավորումը լրիվ լինի և ջրաղացը կանոնավոր աշխատի: Պատասխանատու յե ջրաղացի աշխատանքի, ինչպես նաև նրա արտադրողականութիւն ու ալյուրի վորակի համար:</p>	4
36 Խոհարարուհի	<p>Պետք է իմանա կերակուր յեփել և շնորքով ու խնայողութիւնամբ վարվել մթերքների հետ: Ուտելիք ե պատրաստում կոլխոզի անդամների համայնացված սեղանի համար:</p>	

- Պատասխանատու յե կերակուրների վորակի համար: 3
- 37 Հացթուխ Հաց թխելու փորձառություն պետք է ունենա: Կատարում է հաց թխելու բոլոր աշխատանքները: Պատասխանատու յե հացի վորակի և աճելու նորմայի համար: 2—3
- 38 Խոհանոցում աշխատողները Բանջարեղենները մաքրում, կաթսաները լվանում, կրակ են անում, ամանները, սրբելիչները և գոգնոցներն են լվանում և աղտոտ ջրերը դուրս տանում: 1
- 39 Լվացարարուհին Սպիտակեղենները լվանում, ցայում և հարթուկում են, լվացված սպիտակեղենները ջուկջկում և ծալում են: 2
- 40 Դերձակը ա) Նոր զգեստ կարողը պետք է գիտենա թե տղամարդկանց և թե կանանց զգեստները ձևել: 3—4
բ) Պետք է իմանա հին զգեստները նորոգել և կարկատել: 2—3
- 41 Կոշկակարը ա) Պետք է հասկացողություն ունենա կաշիների տեսակների և նրանց հատկությունների մասին: Պետք է իմանա նոր կոշիկ ձևել ու կարել և հին կոշիկները նորոգել: 3—4
բ) Նորոգում է հին կոշիկները և ավագ կոշկակարի ղեկավարությամբ կարում է նոր կոշիկներ: 2—3

- 42 Փեթակապահը Ղեկավարում է փեթականոցի բոլոր աշխատանքները: Փորձառու պետք է լինի մեղուների ձագ հանելու, նրանց կերակրելու և արհեստական մոմ պատրաստելու գործում: Ծանոթ պետք է լինի փեթակների սխտեմներին և կուլտուրական բույսերին: 4
- 43 Տակառագործը Պետք է ճանաչի փայտի զանազան տեսակները և գիտենա նրանց չորացնելը: Շինում է ամեն տեսակի տակառներ, տաշտեր և այլն, փայտի ամուր և կակուղ տեսակներից: 3
- 44 Լծասարքի վարպետը Փորձառություն պետք է ունենա հում կաշի պատրաստելու գործում: Պիտի իմանա տեսակները վորոշել: Նրա պարտականությունն է նոր լծասարք ու թամբեր շինել և հները նորոգել: Կարում է միմիանց տրանսիսիայի փոկերը պատասխանատու յե պատրաստած առարկաների վորակի և զիմացկունության համար: 4
- 45 Անիվ շինողը Պետք է ճանաչի փայտի զանազան տեսակները և գիտենա նրանց չորացնելն և անիվներ ու սահնակներ շինելը: Հիմնական վերանորոգման է յենթարկում գյուղատնտեսական բարդ մեքենաները: 4
- 46 Ատաղծագործը ա) 1-ին կարգի: Հասկացողություն պիտի ունենա շերտյութների մասին և գիտենա ճանաչել փայտի տարբեր տեսակներն ու նրանց չորացնելը: Լայն մասշտաբով ծանոթ պետք է լինի ատաղծագործական աշխատանքներին: Հիմնական վերանորոգման է յենթարկում բարդ ինվենտարի փայտի

	մասերը և կատարում է ատաղձագործության վերաբերյալ բոլոր գործերը: Նա պարտավոր է գործը մաքուր շինել:	3
	բ) 2-րդ կարգի. աշխատում է ատաղձագործի ցուցմունքներով և ղեկավարութեամբ:	3
47 Հյուանը	ա) 1-ին կարգի. հասկացողություն պետք է ունենա հասարակ շերտյոժների մասին և ճանաչի փայտի տարբեր տեսակները:	4
	բ) 2-րդ կարգի. նույն պարտականություններն ունի, ինչ վոր 1-ին կարգինը, բայց ավելի ցածր վորակավորումով:	3
48 Վորմնագիրը	1-ին կարգի. հասկացողություն պետք է ունենա ինչպես շերտյոժների, նույնպես և զանազան տեսակ վառարանների, սլիտաների և ծխնելույզների մասին: Պետք է գիտենա կավի, կրի և ցեմենտի շաղախով պատ շարել, նոր վառարաններ շինել և հրները նորոգել:	4
49 Ներկարարը	1-ին կարգի. պետք է իմանա յուղ յեփել և զանազան ներկերի խառնուրդներ պատրաստել: Անհրաժեշտ է գործնական ծանոթություն ունենալ ներկերի, գույների և բաղադրության մասին, այսինքն յուղաներկերի, սոսնձաներկերի և լակերի մասին: Ներկում է գյուղատնտ. ինվենտարը և կատարում է ներկարարության վերաբերող բոլոր աշխատանքները:	5
	2-րդ կարգի. նույն պարտականություններն ունի, ինչ վոր 1-ին կարգինը, բայց ավելի ցածր վորակավորումով:	3

50 Սվաղողը	1-ին կարգի. հասկացողություն պետք է ունենա նկարների մասին: Զանազան տեսակի սվաղներ է կատարում թե նոր կառուցվող շենքերում և թե հին տների վերանորոգման ժամանակ, դուրս բերելով կառնիզներ և բարդ գոտիներ:	4
	2-րդ կարգի. պետք է գիտենա շերտով ու վատերպասով սվաղել և շաբլոնով աշխատել ու շաղախի զանազան խառնուրդներ կատարել:	3
51 Պղնձագործ— թիթեղագործը	ա) Պետք է գիտենա նորոգել զանազան սիստեմի ռազիատորներ, ավտոմոբիլների և տրակտորների թեվերը, կաթսաներն ու պողջիպնիկները: Պետք է իմանա նաև թրծել, զողել ու կարգի գցել զանազան պղնձե առարկաներ և առանց ուրիշի ոգնության, վորոշել տաքացնելու աստիճանն ու գողող նյութի բաղադրությունը: Մասնակցում է գյուղատնտեսական ինվենտարի նորոգմանը:	5
	բ) Նույն գործերն է կատարում, բայց աշխատում է պղնձագործի հրահանգներով. թիթեղից շինում է դույլեր, ամաններ և զանազան առարկաներ:	4
52 Փականագործը	ա) Փականագործ—մոնսյոր (ավագ) կատարում է նույնը, ինչ վոր 1-ին կարգի փականագործը: Բացի դրանից, գործնականորեն ղեկավարում է գյուղմեքենաները նորոգող վորակյալ բանվորների խումբը: Նա պիտի իմանա բարդ մեքենաներ հավաքել, նորոգել և կարգի գցել: Պատասխանատու չէ գյուղատնտեսական մեքենաների նորմալ աշխատանքների համար:	6

բ) 1-ին կարգի. հասկացողություն պետք է ունենա նախագծերի մասին, լավ ծանոթ պետք է լինի զանազան տեսակի գյուղատնտեսական մեքենաների կազմությանը և կարողանա գործնականորեն աշխատել նըրանցով՝ տարբեր պայմաններում:

5

գ) 2-րդ կարգի. գյուղատնտեսական բարդ մեքենաները նորոգելու և կարգի գցելու գործում կատարում է ավելի պարզ աշխատանքներ: Մեքենաներն աշխատեցնելու ժամանակ սպասարկում և նորոգում է նրանց:

4

դ. ոգնականը. աշխատում է փականագործի ղեկավարությամբ:

3

53 Դարբինը

1-ին կարգի. հասկացողություն պիտի ունենա պարզ շերտյոժների մասին և կարողանա վորոշել պահանջվող յերկաթեղենի քանակը: Պետք է գիտենա զողելու զանազան սիստեմները, ինչպես նաև ծանոթ լինի սմբակի հիվանդություններին ու պայտելու ձևերին: Ընդհանուր ծանոթություն պետք է ունենա գյուղատնտեսական ինվենտարի բոլոր տեսակների մասին և կարողանա կրճել յերկաթե և պողպատե զանազան կարևոր առարկաներ:

5

2-րդ կարգի. վորակավորումն ավելի ցածր է, քան 1-ին կարգի դարբնինը, բայց լավ պետք է կարողանա մեքենաները նորոգելն և ձի պայտելը:

4

54 Մրճահարը

ա) Ծանոթ պետք է լինի զողելու զանազան ձևերին և գիտենա վարվել բոլոր

գործիքների, փուքսի և ածուխի հետ: Շատ լավ պետք է իմանա մուրճով աշխատելը և կարողանա խփել թե աջ և թե ձախ ձեռքով:

3

բ) Նույն վորակավորումն ու պարտականություններն ունի, սակայն ավելի պարզ աշխատանքներ է կատարում:

2-3

55 Ավագ շոֆերը

1-ին կարգի. պետք է գիտենա ղեկավարել զանազան սիստեմների ավտոմոբիլներ և ծանոթ լինի նրանց կազմությանը: Կարողանա քանդել ու միացնել ավտոմոբիլի մասերը և անհրաժեշտ ընթացիկ ռեմոնտ կատարել: Աշխատում է ծանր տիպի—բեռնակիր մեքենաների և թեթև ու արագաշարժ մեքենաների վրա:

6

2-րդ կարգի. պետք է գիտենա ավտոմոբիլի կազմությունը և կարողանա մեքենաների վորոշ մասեր ժողովել և ընթացիկ ռեմոնտ կատարել: Նա պիտի իմանա աշխատել մեկ կամ յերկու տեսակ մեքենաների վրա:

5

56 Ելեկտրամոնոյորը

ա) Ավագը, 1-ին կարգի. պետք է գիտենա ելեկտրոմոտոր ինամել և ելեքտրական ամբողջ սարքավորումը վերանորոգման յենթարկել: Հետևում է ելեքտրոմոտորի նորմալ աշխատանքին և պատասխանատու յե մոտորի, շարժիչի և ելեկտրական ամբողջ սարքավորման համար: Լուսավորության համար ելեկտրականություն է անցկացնում:

7

ԱԶԻՆՏԱՆՔԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոլխոզներում աշխատանքի արտադրողականութունը խրախուսելու նպատակով՝ անհրաժեշտ է կազմակերպել հատուկ պարգևատրութուն՝ այս կամ այն աշխատանքը լավ կատարելու, արտադրական պրոցեսները (աշխատողների առաջարկությամբ) դացիոնալացնող ձեռնարկումների, ինչպես նաև աշխատանքի պայմաններն հեշտացնող, լավացնող և վորակը բարձրացնող գյուտերի համար:

Պարգևատրության միջոցների աղբյուրը հանդիսանում է այն հատուկ ֆոնդը, վորը կազմվում է կոլխոզի միջոցներից, վորոշ տոկոս հատկացնելով և աշխատանքների վատ վորակի համար նշանակվող տուգանքներից:

Ցանկալի յե, վոր պարգևներ տալիս ամեն անգամ հաշվի առնվի կոլխոզի ստացած ոգուտը և պարգևը տրվի այդ ոգուտի համեմատ (50 տոկոսից վոչ ավելի):

Պարգևներ տալ կարելի յե ինչպես առանձին աշխատողներին, այնպես էլ ամբողջ բրիգադներին: Վորովհետև խմբական աշխատանքը հանդիսանում է աշխատանքի կազմակերպության ամենացանկալի ձևը, դրա համար էլ լավ կլինի, վոր պարգևները տրվեն ամբողջ բրիգադներին:

Պարգևը բաժանվում է բրիգադում աշխատողների միջև՝ նրանց աշխատավարձի համեմատ, այնպես վոր, յեթե բրիգադում աշխատողները պատկանում են տարիֆային ցանցի տարբեր կարգերին, այն դեպքում նրանց տրվող պարգևներն էլ համապատասխան պետք է լինեն աշխատավարձին:

Ամեն մի կոլխոզում պարգևատրության կարգն ու չափը մեծ խնամքով պետք է մշակվի, հաշվի առնելով կոլխոզի տեղական առանձնահատկութունները:

Պարգև տալիս հաշվի պետք է առնել կատարված աշխատանքի վորակն և կամ ստացված արդյունքը, իսկ անասնաբուծության մեջ շատ կարևոր է հաշվի առնել նաև քանակը:

ԻՆՁԻ՞ ՀԱՄԱՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՊԱՐԳԵՎ ՏԱԼ

Անասնաբուծության մեջ, ըստ կոլխոզի բնույթի, կարելի յե նախորոշել պարգևատրության հիմնական ցուցանիշները: Բորը անասնաբուծական կոլխոզների համար կարող են լինել հետևյալ ցուցանիշները.

1. Կերը և անասունների տակ փոփոց հարդը խնյողաբար և ոացիոնալ կերպով ոգտագործելը:
2. Շենքը մաքուր պահելը:
3. Անասուններին մաքուր պահելը:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ

(ԱՆՍՈՒՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

1. Կթվող կաթի քանակն ավելացնելը:
2. Կաթի և ամանների մաքրությունը:
3. Հորթերին լավ խնամելը (գիրացնելիս նրանց քաշն ավելացնելը):
4. Մորթելու համար անասունները գիրացնելիս նրանց քաշն ավելացնելը:
5. Ազնվացնելու համար պահվող անասունների հետ խնամքով վարվելը և գուգավորման շրջանում ազնվացեղ ցուլին ոացիոնալ կերպով ոգտագործելը:

ՋԻԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Ազնվացեղ ձիերին, բանող ձիերին և մատղաշ ձիերին լավագույն ձևով խնամելը:
2. Չուգավորման շրջանում յերիվարներին ոացիոնալ կերպով ոգտագործելը:

ԽՈՋԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Խոզերին մեծացնելիս և գերացնելիս նրանց քաշն ավելացնելը և սատակողների թիվը պակսեցնելը:
2. Մայր խոզերին խնամելիս՝
 - ա) ընկեցիկների տոկոսը պակսեցնելը,
 - բ) սատակող գոճիների տոկոսը պակսեցնելը:

ՎՈՋԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Վոչխարներին կանոնավոր պահելը և բրդի ու մսի ավելացման համեմատ ուսցիոնալ կերպով կերակրելը:
2. Հղի վոչխարներին լավ խնամելու շնորհիվ ծնելու ժամանակ մեռած ծնվող գառների թիվը պակսեցնելը:
3. Լավ խնամելով սատակող գառների թիվը պակսեցնելը:
4. Յեղային անասուններին որինակելի ձևով կերակրելը:
5. Զուգավորման շրջանում, ցեղային շրջանում ուսցիոնալ կերպով ոգտագործելը:

ՃԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Զագերի քանակն ավելացնելն ու վորակը լավացնելը:
2. Մատղաշներին լավ կերակրելը:
3. Մորթիների վորակը լավացնելը:
4. Մորթիվելիք ճագարներին կանոնավոր կերպով գերացնելը:

ԹՈՋՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Հավերի ձվատվությունն ավելացնելը:
 2. Թռչուններին գերացնելիս նրանց յուղոտությունն ավելացնելը:
- Մեջ բերենք մի քանի մեթոդներ, վորոնցով կոլխոզը պետք է ղեկավարվի պարզեներ սահմանելիս:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԻ ՀԱՉՎՈՎ

1. Այս մեթոդով ամենից ավելի հեշտ է լինում պարզեներ նըշանակել՝ մանր անասունների (վոչխար, խոզ, ճագար) ճագերն ավելացնելու համար: Նախորդ սահմանվում է ճագ հանելու նորմալ տոկոսը և դրանից ավելի յեղած ճագերը պարզեատրվում են: Ամեն մի հավելյալ ճագի համար սահմանվում է պարզեկի վորոշ չափ, վորը կարող է պակաս լինել, որինակ, նորմայից ավելի յեղած ճագերի տաաջին տասնյակի համար և ավելի լինել գրանից հետո յեկող տասնյակների համար: Որինակ, յեթե ծնվող գառների թիվը, ամեն մի 100 վոչխարին, սովորականից ավելի ստացվի, ապա ուրեմն սովորականից ավելի ստացված ամեն մի գառի համար 15—20 կոպ. պարզե և տրվում:

2. Պարզեն ըստ քաշի սահմանելիս քաշի ավելացումը վորոշվում է պարբերաբար կշռելու միջոցով: Պարզեատրվում է նա, ով գերակատարում է վորոշ ժամանակի համար նշանակված նորման: Տվյալ դեպքում պարզե տալ կարելի յե ամեն մի կիլոգրամի համար հաստատորեն սահմանված չափով (որինակ, 5—10—15 կոպ.) և կամ վորոշ տոկոսով այդ քաշի արժեքի համեմատ: Որինակ, մի վորոշ ժամանակամիջոցում գերացվող անասունների քաշն ավելացել է նորմայից բարձր, ընդհանուր առմամբ 200 կիլոգրամով: Յենթագրենք, վոր մի կիլոգրամի արժեքը 25 կոպեկ է, ուրեմն կատանա նորմայից ավել ընդամենը $25 \times 200 = 50$ ո. ոգուտ:

Յեթե յենթագրենք, վոր պարզեը պետք է կազմի այդ գումարի 50 տոկոսը, ապա ուրեմն պարզե ստացողին կհամարի 25 ոուբլի:

Յենթագրենք, վոր 100 գլխանոց նախրի ամբողջ տարվա տված կաթը, շնորհիվ նրան սպասարկող բրիգադի ջանքերի, ավելացել է 80 ցենտներով՝ նախորդ տարվա համեմատությամբ: Մեկ ցենտներ կաթի գինն ընդունենք 6 ոուբլի, այդ դեպքում կոլխոզը ստանում է $6 \times 80 = 480$ ոուբլի: Յեթե պարզեկի չափը 15 տոկոս վորոշված լինի, այդ դեպքում բրիգադը կտասնա 72 ոուբլի: Յեթե ամբողջ տարվա կաթն ավելանա ավելի քան 80 ցենտներ (100 գլխին), այդ դեպքում նորմայից ավել

լի ստացված կաթի համար պարգևը տրվում է 20 տոկոսի հաշվով: Եւսիւնքն պարգևն ավելանում է կաթի ավելանալու համեմատ,

Պարգևներ պետք է տալ ըստ մի քանի ցուցանիշների, վերաբերում այդ բոլոր ցուցանիշները տնտեսութեան ամեն մի ճյուղում սերտորեն կապված են միմիանց և նրանցից մեկն ու մեկի լավացումը քաջում է իր հետեւից ուրիշ ցուցանիշներ: Այսպէս, որինակ, անասնի կերը լավացնելու դեպքում բարձրանում է նրա կաթնատուութեանը, լավանում է առողջութեանը և այլն:

Որինակ, ըստ սահմանված նորմայի, խոզը 9 ձագ է տալիս, իսկ ամբողջ տարում հաշվելով 1 և կես ծնունդ—13-14 ձագ: Գոճինների թիվն այս նորմայից վեր բարձրանալու դեպքում, ամեն մի գոճու համար պարգև տալ, որինակ, 20 կոպ:

Սատակելուց պաշտպանված ամեն մի (նորմայից դուրս) գոճու համար պետք է տալ 25 կոպ. պարգև, իսկ ամեն մի մայր խոզի համար՝ 2 ուրբլի:

Տնտեսութեան դաշտաբուծութեան ճյուղերում պարգևներ պետք է տալ.

ա) Ինվենտարի նորոգման ծախսը պակասեցնելու համար: Մեքենայով աշխատելիս վառելանյութը խնայողութեամբ գործածելու և տրակտորները աննպատակ այս ու այն կողմ շարժելն ու պարապ կանգները պակասեցնելու համար:

բ) Գաշտային աշխատանքների վերաբերյալ՝ հողը լավ հերկելու և լծկաններով աշխատելիս անհրաժեշտ խորութեամբ ցանքս անելու համար: Հունձի ժամանակ մեքենաներն անընդհատ աշխատեցնելով հանդերձ նրանց նվազագույն չափով մաշելու և փչացնելու համար: Կալի ժամանակ մաքուր կալսելու և մեքենան նվազագույն չափով փչացնելու համար:

Միանգամայն պարզ է, վոր աշխատանքի վորակը բացառիկ նշանակութեան ունի ցանքսի (ձեռքով, ձիով, տրակտորով) և մանավանդ գարնանացանի ժամանակ: Այդ պատճառով պարգևները պետք է սահմանվեն գլխավորապէս ծիւրերի դուրս գալուց հետո, այսինքն այն ժամանակ, յերբ հնարավոր է լինում հաստատապէս վորոշել ցանքսի հավասար ու կանոնավոր կատարված լինելը:

Վորակը պարգևիս նույնքան ուշադրութեան պետք է դարձնել նաև դաշտային մյուս աշխատանքների վրա: Որինակ, վարի ժամանակ առանձին ուշադրութեան պետք է դարձնել խորութեան, հողամասի ծայրերը կանոնավոր վարելու վրա և այլն: Տափանելիս՝ տափանների, քանակի և ծայրերը կանոնավոր տափանելու վրա և այլն: Բաղհանի և քաղհանվող բույսերը նոսրացնելու ժամանակ ուշադրութեան պետք է դարձնել փոշ միայն գործը մաքուր կատարելու, այլ նաև այն բանի վերա, թե աշխատանքի ժամանակ ծրոյ բույսերն ի՞նչ չափով են փոսպիլ: Մի խոսքով, կոլխոզը խստորեն պետք է հետեւի, վորպէսզի պարգևատրվող բրիգադների աշխատանքների քանակը բարձրովին չազդի նրանց վորակի վրա:

Այստեղ թվածս յուրաքանչյուր ցուցանիշը պարզ հասկանալու և նրանցով պարգևներ տալու համար պետք է զեկակավարվել հետեւյալ առանձնահատկութեաններով:

ՊԱՐԳԵՎ — ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՆ ԽՆԱՄՔՈՎ ՎԵՐԱԲԵՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պարգևի չափը պետք է կազմի փոշ ավելի քան 50 տոկոսը այն դումարի, վորը տնտեսվում է մեքենաները խնամքով գործածելու և ռեմոնտի ծախսերը պակասեցնելու շնորհիվ:

Որինակ, յենթադրենք, վոր գյուղատնտեսական մեքենաների և գործիքների ռեմոնտի սովորական ծախսը (պահեստի մասերով ապահովված լինելու դեպքում) հավասար է 250 ուրբլու, բայց շնորհիվ զեպի այդ մեքենաներն ու գործիքները ցույց տված խնամքի ու զգուշութեան, ծախսվել է միայն 150 ուրբլի: Ուրեմն ծախսը պակասեցված է 100 ուրբլով (250—150=100): Այդ տնտեսված 100 ուրբլուց 50 տոկոսը (այսինքն 50 ուրբլին) պետք է տրվի բրիգադին իբրև խրախուսանք կամ պարգև: Պարգևների բաժանումը կատարվում է նույն ձևով, ինչ ձևով վոր կատարվում է աշխատանքների ժամանակը կրճատելու համար տրվող պարգևները բաժանելիս:

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վառելանյութի խնայողութիւնն ասելով հասկացվում է ծախսովոյ նավթի և բենզինի քանակի կրճատումը, արակտորներով և շարժիչ մեքենաներով աշխատելիս:

Խնայողութեան հաշվառումը շատ հեշտ է, բայց և միևնույն ժամանակ նկատվում է չափազանց անփութ վերաբերմունք՝ վառելանյութ ծախսելու խնդրում: Առաջարկվում է վառելանյութի խնայողութիւննից ստացված գումարի 30—50 տոկոսը հատկացնել պարգևատրութեան:

Ուշի-ուշով պետք է ստուգել, թե ինչպես է կատարվում վար ու ցանքսը, փորովհետև վարի և ցանքսի խորութիւնը մեծ նշանակութիւն ունի անտեսութեան համար: Տրակտորիստները կարող են պակասեցնել սովորական խորութիւնը, փորպեսզի վառելանյութը քիչ ծախսվի: Յերբ պակասում է խորութիւնը, պակասում է նաև մեքենաների դիմադրութիւնը՝ առաջ բերելով վառելանյութի ծախսի կրճատում:

Պարզև սահմանվում է հետևյալ ձևով. յենթադրենք՝ բրիգադը տասն ուժանոց արակտորներով վարել է 500 հեկտ. հող (միջին կարծրութեամբ): Ըստ նորմայի (Գոնի շրջանում) ամեն մի հեկտարին թույլ է տրվում ծախսելու 26,3 կիլոգրամ նավթ և ծախսովոյ նավթի 2 տոկոսի չափ էլ բենզին, փորն ամբողջ մշակված հողի վրա հաշված՝ կտտացվի 131,5 ցենտներ նավթ և 2,63 ցենտներ բենզին: Իսկ յենթադրենք, փոր փաստորեն ծախսվել է 115,23 ց. նավթ և 1,73 ց. բենզին (115 ց. նավթի 1,5 տոկոսը): Այսպիսով ուրեմն ստացվում է վառելանյութի խնայողութիւնն—16,5 ց. նավթ և 0,9 ց. բենզին: Յեթե այդ խնայողութիւնը դրամի վերածենք, կտտանանք 97 ո. 46 կոպ.: Այդ գումարի 50 տոկոսը (48 ո. 73 կոպ.) պետք է տրվի աշխատողներին՝ փորպես պարգև:

Իսկ նրանք, ովքեր փոր իրենց անփութութեան պատճառով նորմայից ավելի յեն վառելանյութ ծախսում, այդպիսիներին անհրաժեշտ է տուգանել, այսինքն աշխատավարձից կտրել ավելորդ ծախսված վառելանյութի արժեքը:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ

Աշխատանքի վորակը բարձրացնելու նպատակով կատարվող ձեռնարկումներն ավելի մեծ հաջողութեամբ կիրառելու համար անհրաժեշտ է մշակել տուգանքների հատուկ տախտակ (ցուցակ):

Տուգանաց տախտակը նախատեսնում է տուգանքների զանազան միջոցները. որինակ՝ հասարակական հանդիմանութիւնն, աշխատավարձի մի մասի կտրելը, ավելի ցածր աշխատավարձով ուրիշ աշխատանքին փոխադրելը և փորպես ծայրայեղ միջոց—կոլխոզի անդամութիւննից հանելն և այլն:

Տուգանվում են—ինվենտարը վատ խնամելու, փչացնելու համար, տավարին լավ չնայելու և թույլ խնամելու համար, վարի, ցանքսի և քաղհանի վորակն իջեցնելու համար, այս կամ այն նյութը փչացնելու և կորցնելու համար, աշխատավարձի վորակը սխառմատիկորեն վատացնելու, մի անգամ տուգանված պարտազանցութիւնը կրկնելու համար և այլն: Տախտակում դրված պետք է լինեն բոլոր հանցանքները և տուգանքի համապատասխան միջոցները:

Տուգանք նշանակելիս՝ անհրաժեշտ է ճշտորեն հաշվի առնել այն, թե ի՞նչ կոնկրետ հանգամանքներումն է՞ տեղի ունեցել աշխատանքի վորակի վերաբերյալ պահանջների խախտումը:

Տուգանքներից ստացվող գումարները, ինչպես ասված է վերևում, միացվում են պարգևատրութեան ֆոնդին: Տնտեսութեան ճյուղերի վարիչների առաջարկութեամբ կոլխոզի վարչութիւնն ինքն է նշանակում պարգևները և տուգանքները՝ նախապես արտադրական հանձնաժողովում քննելուց հետո. վերոհիշյալ աշխատանքներին մասնակցում են նաև շահադրուված բրիգադները:

№ №	ՉԱՆՅԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԻՆԱԿՆԵՐ	Տ Ո Ւ Դ Ա Ն Ք
1	Ներքին կարգի խախտումը (աշխատանքից հրաժարվելը, ուշանալը, աշխատանքի չգալը) առանց հարգելի պատճառների և կամ առանց նախապես հայտնելու:	Համաձայն ա, ե, ր, թ կետերի:
2	Խմած աշխատանքի գալը:	Համաձայն ա, ե, ր, թ կետերի:
3	Առանց հայտնելու աշխատանքից հեռանալը, կամ առանց ղեկավարի թույլտվութան ժամանակից առաջ աշխատանքը դադարեցնելը:	Համաձայն ա, ե, ր, թ կետերի:
4	Մխտեմատիկորեն սպառա արտադրելը, աշխատանքի վատ վորակը:	Համաձայն ա, բ, գ, ե, ր, թ կետերի:
5	Աշխատանքային դիսցիպլինայի խախտումը: Ղեկավարին, ընկերներին կուպիտ վերաբերվելը և սպառապ ժամանակ անցկացնելը:	Համաձայն ա, ր, թ կետերի:
6	Ղեկավարին և ընկերներին ֆիզիկապես վիրավորելը (ապտակել և այլն):	Համաձայն ե, թ, ժ կետերի:
7	Կոլխոզի գույքին անփույթ վերաբերվելը, փչացնելը, կոտրելը, կորցնելը (վոչ զիտավորյալ):	Համաձայն բ, գ, ե, ր, թ կետերի:
8	Դիտավորյալ կերպով գույքը փչացնելը:	Համաձայն ր, թ, ժ կետերի. դորձադրելով նաև դ կետերը:

9	Հրդեհի առաջն առնելու համար դրված պահանջները չկատարելը (վոչ զիտավորյալ):	Համաձայն ա, ր, թ, գ, ե կետերի:
10	Դիտավորյալ կերպով այդ պահանջները խախտելը:	Համաձայն ժ, թ, ր կետերի:
11	Առողջապահական կանոնների խախտումը:	Համաձայն ա կետի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1, 2, 3, 4, 5, 7 և 9-րդ բաժիններում նախատեսված պարտազանցութունները մի ամսվա ընթացքում 3 անգամից ավելի կրկնվելու դեպքում, համարվում են սխտեմատիկորեն կատարված պարտազանցութուններ և առաջ են բերում համապատասխան հետևանքներ:

ՏՈՒԳԱՆԱՑ ՏԱՆՏԱԿԸ

1. Աշխատանքի կարգապահութունը խախտելու համար կոլխոզի վարչութունը, կամ նրա լիազորությամբ հոգամատի վարիչը իրավունք ունի նշանակելու այս առաջանաց տախտակում նախատեսված առաջանքների հետևյալ միջոցները՝
- ա) Նախազգուշացնել,
 - բ) Հանդիմանել,
 - գ) Աշխատավարձը պակասեցնել,
 - դ) Փոխադրել ցածր վարձատրվող աշխատանքի և աշխատավարձից կտրել կոլխոզին հասցրած վրասների արժեքը (վարչութան սահմանված չափով):
 - յ) Վորոշ ժամանակի համար աշխատանքից հեռացնել,
 - զ) Կոլխոզի անդամութունից ժամանակավորապես հեռացնել,
 - է) Կոլխոզի անդամութունից բոլորովին զրկել,
 - ը) Քրեյական պատասխանատվության յենթարկել:

2. Այս տախտակում նախատեսնված տուգանքները նշանակվում են 86 և 87 եջում (տես «զանցառության որինակները»):

3. Տուգանքները նշանակում ե կոլխոզի վարչութիւնը, կամ նրա կողմից լիազորված հողամասի վարիչը, իհարկե, նախապես քննութիւն յենթարկելով կատարված պարտագանցութիւն բոլոր հանգամանքները:

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Աշխատանքային կոնֆլիկտները (վեճերը) լուծելու համար (աշխատավարձի, արտադրանքի նորմայի, աշխատանքի բնույթի և այլ խնդիրներ) կոլխոզում կազմակերպվում ե հատուկ կոնֆլիկտային հանձնաժողով՝ 4 հոգուց բաղկաւած (2-ր կոլխոզի վարչութիւնից և 2 ը կոլխոզի անգամներից), վորոնք են՝

1. աշխատանքի բյուրոյի վարիչը.

2. տնտեսութիւն համապատասխան ճյուղի վարիչը.

3. կոլխոզի բոլոր անգամների ընդհանուր ժողովում կամ լիազորների ժողովում ընտրված ներկայացուցիչը և

4. չքավորական խմբի ներկայացուցիչը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տնտեսութիւն համապատասխան ճյուղի վարիչը մասնակցում ե կոնֆլիկտային հանձնաժողովին՝ ավյալ ճյուղին վերաբերող կոնֆլիկտները լուծման ժամանակ:

2. Կոնֆլիկտային հանձնաժողովին հանձնված գործերը պետք ե լուծվեն մի շաբաթվա ընթացքում:

ԱՆՍԱԴՐԱԿԱՆ ԿՈՒՍՈՋՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՐԳԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Կոլխոզի վարչութիւնն ոգնելու համար կազմակերպվում են արտադրական հանձնաժողովներ ու խորհրդակցութիւններ: Դրանց նպատակն ե բատրակ-չքավոր և միջակ մաս-

սաներին մասնակից դարձնել մանր-անհատական տնտեսութիւնները խոշոր սոցիալիստականի վերածելու գործին՝ նրանց անձնական ձեռներեցութիւնը զարգացնելու, աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացնելու, տնտեսութիւն բոլոր ճյուղերի սոցիոնալացման և ինքնաքննադատութիւնն ու սոցմրցումը լայնորեն գործադրելու միջոցով:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1. Կազմակերպվում ե վարչութիւն վորեւ անդամի նախագահութիւնը և կազմված ե վոչ ավելի, քան 5 մարդուց՝ 200-ից վոչ ավելի անդամ ունեցող կոլխոզներում և վոչ ավելի, քան 11 մարդուց՝ ավելի խոշոր կոլխոզներում:

2. Արտադրական հանձնաժողովն ընտրվում ե մի տարով, արտադրական խորհրդակցութիւն անգամների ընդհանուր ժողովում և կամ կոլխոզի անգամների ընդհ. ժողովում (յերբ կոլխոզնիկների թիվը 200-ից պակաս ե):

Արտադրական հանձնաժողովի անդամութիւն թեկնածուները նշանակվում են չքավորների, բատրակների և կոլխոզի ակտիվի հատուկ հրավիրված խորհրդակցութիւն կողմից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Արտադրական հանձնաժողովը կարող ե իր միջից ժամանակավոր կամ մշտական յենթահանձնաժողովներ ընտրել, տնտեսութիւն այս կամ այն ճյուղին վերաբերող վորեւ խնդրի քննութիւնն ու մշակման համար: Յենթահանձնաժողովի աշխատանքների ղեկավարութիւնը հանձնվում ե արտադրական հանձնաժողովի անգամներից մեկին:

3. Արտադրական հանձնաժողովը բացի նրանից, վոր լուսաբանում ե իր աշխատանքն ու վորոշումները՝ պատի թերթի և առհասարակ մամուլի եջերում—պարբերաբար, վոչ պակաս քան 3 ամիսը մի անգամ, հաշիվ ե տալիս իր գործունեյութիւն մասին արտադրական խորհրդակցութիւնը, կամ կոլխոզի ընդհանուր ժողովին:

4. Արտադրական հանձնաժողովի անգամները վորեւ վարչական իրավունքներ չունեն: Հանձնաժողովն իր աշխատանքների համար անհրաժեշտ տեղեկութիւններն ու նյութերը ըս-

տանում ե կոլխոզի վարչութիւնից, ոգտագործելով նրա գրասենյակի ապարատը:

5. Արտադրական հանձնաժողովի անդամներն իրենց հիմնական աշխատանքից (կոլխոզի տնտեսութեան մեջ) չեն ազատվում, այլ հանձնաժողովում աշխատում են հասարակական գրծով, վորի համար առանձին վարձատրութիւն չեն ստանում:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Այն կոլխոզներում, վորոնց անդամների թիվը 200-ից չի անցնում, կոլխոզի ընդհանուր ժողովը հանդիսանում է միաժամանակ արտադրական խորհրդակցութիւն:

2. 200-ից ավելի անդամ ունեցող կոլխոզներում, արտադրական խորհրդակցութիւնը կազմվում է ակտիվ կոլխոզիկներից, չքավորներից, միջակներից և գյուղական ինտելիգենցիայից, մասնագետներից ու տեխնիկական պերսոնալից:

3. Արտադրական խորհրդակցութիւնը կազմակերպված պետք է լինի այն հաշիվով, վոր նրանում ներկայացված լինեն ավալ կոլխոզի տնտեսութեան բոլոր ճյուղերը և նրա աշխատանքներին անպայման մասնակցեն արտադրական հանձնաժողովի անդամները:

4. Արտադրական խորհրդակցութեան ժողովները կայանում են աշխատանքներից հետո, արտադրական հանձնաժողովի հրավերով, նախապես ճիշտ վորոշված և կոլխոզի վարչութեան հետ համաձայնեցված ժամանակ:

5. Արտադրական խորհրդակցութիւնները քննում և մշակում են կոլխոզի թե ընդհանուր պլանները և թե առանձին արտադրական-տնտեսական խնդիրներին վերաբերող խնդիրները:

6. Արտադրական խորհրդակցութեան և հանձնաժողովի արձանագրութիւնները հանձնվում են կոլխոզի վարչութեանը՝ քննելու և կիրառելու համար:

7. Կոլխոզի վարչութիւնը պարտավոր է վոչ ավելի, քան 10 որվա ընթացքում վերջնականապես տեղեկացնել՝ թե առաջարկութիւններից վորն է ընդունվում և ապա անմիջապես գործադրել ընդունված առաջարկութիւնները:

8. Յեթե կոլխոզի վարչութիւնը համաձայն չէ խորհրդակցութեան կամ հանձնաժողովի վորոշումներին, այն դեպքում նա պարտավոր է վոչ ավելի, քան 10 որվա ընթացքում, կամ հետ վերադարձնել այդ վորոշումները համապատասխան պատճառաբանութեամբ՝ նորից քննելու համար և կամ ուղարկել ռայոնական կոլխոզմիութեանը, վորը վերջնականապես լուծում է խնդիրը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Առանձին անդամների կողմից արված և իրական արժեք ունեցող այն առաջարկութիւնները, վորոնք վորոշ տնտեսական արդուք են տալիս, պարգևատրվում են վարչութեան արամադրութեան տակ գտնվող առանձին պարգևների ֆոնդից:

9. Արտադրական խորհրդակցութեան և հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝ կոլխոզի գյուղատնտեսութեան ռացիոնալիզացիան և սոցիալիստական վերակառուցումը, անասնապահութեան թե վորակական և թե քանակական զարգացումը, աշխատանքի արտադրողականութեան բարձրացումն՝ ինքնաքննագաութեան և սոցմրցման միջոցով: Անա մոտավոր ցուցակն այն խնդիրների, վորոնք քննութեան են յենթարկվում արտադրական խորհրդակցութիւններում և հանձնաժողովներում:

1. Կոլխոզի արտադրական ծրագիրն ու բյուջեն, 2. արտադրանքի ինքնարժեքի իջեցումը, 3. աշխատանքի արտադրողականութեան բարձրացումն ու զիսցիպլինան ուժեղացնելու միջոցները, 4. կոլխոզի մեքենայացումը, 5. կոլխոզի կուլտուրական սպասարկումը, 6. աշխատանքի պաշտպանութիւնն և բրժըլկական ոգնութիւնը, 7. այն բոլոր խնդիրները, վորոնք կարող են ծագել կոլխոզի լայն մասսաների ձեռներեցութեամբ:

ԻՆՉ Ե ԱՆՈՒՄ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿՈՒՍՈՋԻ ԱՂԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

1. Կոլխոզներում աշխատանքի կազմակերպութեան և պաշտպանութեան բոլոր խնդիրներն իրականացնելու համար վարչութեան կից ընտրվում է հատուկ աշխատանքի կազմակերպիչ,

վորն աշխատում է վարչության անդամներից մեկի ղեկավարութեամբ:

2. Տնտեսութեան տարբեր ճյուղերում գոյութիւն ունեցող աշխատանքի խնդիրները համաձայնեցնելու նպատակով կազմակերպւում են նաև պարբերաբար գումարվող աշխատանքի խորհրդակցութիւններ՝ վարչութեան վորեւէ անդամի նախադասութեամբ և գյուղատնտեսի, ճյուղերի վարիչների և կանանց ու յերիտասարդութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ:

3. Աշխատանքի խորհրդակցութիւնը գումարվում է ամիսը մի անգամ և կամ ավելի հաճախ, յետե կարիք զգացվի: Խորհրդակցութիւնն զբաղվում է այն բոլոր խնդիրների քննութեամբ, վորոնցով զբաղվում է նաև աշխատանքի կազմակերպիչը:

4. Աշխատանքի խորհրդակցութեան մշակած բոլոր խնդիրներն այն ժամանակ են ուժ ստանում, յերբ վարչութեան ներկայացուցիչը հաստատում է:

5. Կարևոր և բացառիկ նշանակութիւն ունեցող խնդիրները հաստատվում են կոլլեկտիվ վարչութեան կողմից:

6. Աշխատանքի կազմակերպութեան, վարձատրութեան և պաշտպանութեան հետ կապված հարցերն ուսումնասիրելու և կիրառելու տեխնիկական աշխատանքը կատարում է աշխատանքի կազմակերպիչը:

7. Աշխատանքի կազմակերպիչը հետևյալ հիմնական աշխատանքներն է կատարում.

ա) կիրառում է աշխատավարձի և աշխատանքի տարիֆիկացիան, մշակում է պարգևատրութիւն, ցանցի և տուգանաց տախտակը,

բ) մասնակցում է արտադրական ծրագրի կազմելուն (բանվորական ուժին վերաբերող խնդիրներում),

գ) բանվորներին բաժանում է տնտեսութեան զանազան ճյուղերի միջև՝ համաձայն նրանց վորակավորման,

դ) նշանակում է աշխատանքի նորմաներ և հսկում է բանվորական ուժի կանոնավոր ոգտագործման վրա (նպատակ ունենալով արտադրութեան միջոցները կանոնավոր ոգտագործելով՝ բարձրացնել աշխատանքի արտադրողականութիւնը),

յե) կոլլեկտի արտադրական խորհրդակցութեան և հանձնաժողովի քննութեան է դնում աշխատանքի կազմակերպութեան խնդիրները,

ե) մշակում է աշխատանքի այն բոլոր խնդիրները, վորոնք մտցվելու յեն սոցմրցման պայմանագրի մեջ և հետևում է պայմանագրի մեջ հիշված ձեռնարկումների կիրառմանը,

ը) կիրառում է այն բոլոր ձեռնարկումները, վորոնք վերաբերում են աշխատանքի պաշտպանութեանը, աշխատանքի անընդունակների ապահովութեանը և կոլլեկտի անդամների կենցաղի բարելավմանը,

թ) սերտ կապ է պահպանում հարևան կոլլեկտիվների և սովխոզների հետ, աշխատանքի խնդիրներում նրանց ունեցած փորձառութիւնն ոգտագործելու համար,

ժ. ավելորդ բանվորական ուժն ոգտագործելու նպատակով միջոցներ է փնտրում (տնայնագործական արտադրութիւն ստեղծելը, բանվորներին կոլլեկտիվից դուրս աշխատանքի ուղարկելն և այլն), բանվորական ուժը կանոնավոր բաժանում և ոգտագործում է,

ի) ծրագրեր է մշակում՝ աշխատանքի անընդունակներին և յերեխաներին ապահովելու համար,

լ) վորոշում է, թե ի՞նչպիսի վորակյալ բանվորների կարիք է զգացվում և միջոցներ է մշակում կոլլեկտի անդամների վերապատրաստման և վորակի բարձրացման համար,

խ) գյուղատնտեսութեան աշակերտութեան համար աշխատանքներ է կազմակերպում և ղեկավարում է նրանց,

ծ) քննութեան է առնում այն բոլոր վեճերը, վորոնք առաջանում են կոլլեկտի անդամների միջև՝ աշխատանքի կազմակերպութեան, վարձատրութեան և պաշտպանութեան խնդիրների շուրջը:

Վ Ր Ի Պ Ա Կ

Գրքիս 46-րդ եջում № 2-րդ աղյուսակում ներված 6, 4 և 3
կատեգորիաների փոխարեն պիտի լինի՝ 4, 3 և 2 (վերևից
ներքև)։

- Գոմի բրեգադ
- Գոմի " "
- Խոզանոցի " "
- Աևրճ Տաքախարարոց .
- Բրեգադի սպասարկ :

Խոշոր անասնաբուծական կոլխոսի ղեկավարության սխեման

Վրչքեսական բաժնի վարիչը

Անասնաբուծության վարիչը

- Բրիգադները**
- Բանակապորտանա բրիգադներ
 - Հյուսաններ
 - Հասարակական
 - Անասնաբուծություն
 - Շրջանային
 - Պահպանում
 - Փրկարկներ և խեղճեր
 - Անասնաբուծության խեղճեր
 - Շենքեր
 - Վրչքեսական փոխ
 - Քրոնիկական ախտաբան
 - Ֆուրսեր
 - Վրչքեսական բաժնի սպասարկող բրիգադներ

- Գոմի բրիգադ
- Գոմի " "
- Խոզանոցի " "
- Թռչնանոցի " "
- Վոլխարանոցի " "
- Մաքուր անաս
- Խորթանոցի
- Անասնաբուծության խեղճեր
- Ցեղանոցի " "
- Փրկարկող յեզերի " "
- Փերականոցի
- Գործող ախտաբան
- Գործող ախտաբան
- Աղորիկի բրիգադ
- Խոզաբանի " "
- Պահպանող փոխարանի " "
- Աղյուսի փոխարան " "
- Վրչքեսական փոխարան " "



- Անասնաբուծության
- Մանկապարտեզ
- Մանկապարտեզ
- Մանկաբուժություն
- Մանկաբուժություն
- Ախտաբանություն

Գրասենյակի փոխարան (Վրչքեսական բաժնի փոխարան)

- Վրչքեսական
- Պրկարկող ախտաբան
- Բանակապորտան
- Խոզանոցի ախտաբան

- Հարող խոտեր
- Վրչքեսական խոտեր
- Կանոց " "
- Անասնաբուծության
- Բրիգադի սպասարկող

- Անասնաբուծության խոտեր
- Կանոց խոտեր
- Անասնաբուծության
- Բրիգադի սպասարկող



- Պահպանող փոխարան
- Պահպանող փոխարան
- Պահպանող փոխարան
- Պահպանող փոխարան

- Վրչքեսական խոտեր
- Կանոց " "
- Անասնաբուծության
- Բրիգադի սպասարկող
- Վարող խոտեր
- Անասնաբուծության
- Կանոց " "
- Անասնաբուծության
- Բրիգադի սպասարկող

- ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ԿԱԶՄԱԾ Ե**
1. Գլխավոր տնտեսական կազմակերպչից
 2. Զոոտեխնիկից
 3. Անասնաբուժից կամ ֆելդշերից
 4. Աղյուսանների կազմակերպչից
 5. Հաշվապահից
 6. Հաշվապահներից
 7. Գործադրության խոտերից

- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
- — Մշտական բրիգադներ
 - ⊗ — Ժամանակավոր բրիգադներ և խմբեր
 - ◊ — Տնտեսության ճյուղի կամ դաշտաբուծական հողաբաժնի վարիչը

« Ազգային գրադարան



NL0208696

ԳԻՆՆ Ե 20 ԿՈՊ.

2471

30.431

1
92